ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 3715 — ՇԱԲԱԹ 20 ՅՈՒՆԻՍ 1884 — Ն. Տ. 2 ՅՈՒԼԻՍ

ԳԱՅՄԱՆ

Տարեկան գին կ. Պոլսոյ համար 10 Մէճիտ
» » Գաւառաց » 12 »
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 5 1/2 »
» » Գաւառաց » 6 1/2 »
Լրամսեայ » Կ. Պոլսոյ » 3 »
Օտար թղթատարով ղրկուած 2 1/2 լիրա
Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրշ. երկու անգամի համար 2 ղրշ է. աւելի անգամներու համար ղրա սակարկութիւն կը լինի

ԱԱՐՄ

ԼՐԱԳԻՐ

40 ՓԱՐԱՁ — 40 ՓԱՐԱՁ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԱՅՄԱՆ

Դուրս գնացած լրագրոյ համար ծախքը խմբագրութեան վրայ է.

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որեւիցէ գրութիւն խմբագիր—Տնտրէնին պիտի ուղղուի Կ. Պոլիս Բիզա փողոց եօզուչը, Շարգ Զարչըսը թիւ 37 Մասիսի դրատներակը։

Ճանաչու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

Չապտուած նամակ, յօդուած, եւայլն եւ չեն տրուիր։

Կ. ՊՈԼԻՍ 20 ՅՈՒՆԻՍ

ԽՈՒՄԲ ԼՈՒՐԵՐ

—o—

Վեհ. Սուլթանը Պալայի ատենաֆան շնորհեց Քաղաքապետութեան վարչական խորհրդոյ նախագահ Բէյզի էֆէնտիին։

—

Արեւելեան Ռումելիի կուսակալ կավրիէլ փաշա երէկ իրիկուն յատուկ կառախմբով Փիլիպէ վերադարձաւ։

—

Կը ծանուցուի թէ Մեծ-Եպարքոս Բարձր. Սայիտ փաշայի հետ դատական գործոց նախարար Հասան Թէհմի փաշայի ունեցած վերջին տեսակցութիւնը դատական բարենորոգմանց կը վերաբերէր, զորս մտադիր է մուծանել իւր պաշտօնատան մէջ։

—

Մայրաքաղաքիս Ֆրանսական դեսպանատան խորհրդական Մոնթոլոն կոմսն Բ. կարգի դեսպանութեան ատենֆան ստացած լինելով, երբեմն Պերլինի Ֆրանսական դեսպանատան առաջին քարտուղար Պ. Կէրբար նորա տեղ խորհրդական անուանեցաւ Տը Նոայմարքիզին։

—

Մայրաքաղաքիս Պուլղարական դրօթական տարութեան Ն. քարտուղար Պ. Նիքոլա կէնովիչ նախընթաց օրը Բ. Դուռն երթալով, Սերպո-Պուլղարական վէճին վրայ ինչ ինչ բացատրութիւններ տուաւ Արտաքին գործոց նախարար Վսեմ. Ասիմ փաշայի, և հաստատեց թէ այս խնդիրն որ և է դժուարութեան առիթ չպիտի լինի կայսերական կառավարութեան համար։

—

Անգլիական, Ռուսական և Աւստրիական դեսպանատանց առաջին թարգմաններն երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցան Արտաքին գործոց նախարար Վսեմ. Ասիմ փաշայի և նոյն նախարարութեան խորհրդական Վսեմ. Ցատեան Յարութիւն էֆէնտիի հետ։

—

150 ի չափ հավալէ ունեցողներու կողմէ պատգամաւորութիւն մը երէկ Եալտըզի կայսերական պալատն երթալով՝ ադերսագիր մատոյց Վեհ. Սուլթանին։

—

Ֆրանսայի մէջ ծագած քաղաքական առթիւ, կայսերական կառավարութիւնը լրջօրէն վերսկսաւ այն ծրագրին քննութիւնը, զոր Կ. Պոլսոյ ջուրի ընկերութիւնն անցեալ տարի ներկայած էր Գասըմ փաշայի կոյանոցին փակման համար։ Յայտնի է թէ ընկերութիւնն յանձն կ'առնու իւր ծախիւք փակել կոյանոցն և անոր վրայ ծառուղի մը շինել, և բոլոր այս շինութեանց փոխարէն, որոց ծախքը քանի մը հազար ոսկւոյ կը հասնի, կը պահանջէ որ իւր արտօնագիրը 20 տարի եւս երկարի։ Կը կարծուի թէ կայսերական կառավարութիւնը պիտի ընդունի այս առաջարկը, որով Գասըմ փաշայի թաղը պիտի ազատի ժահահոտ կոյանոցէն, զոր միշտ սպառնալիք մ'է հանրային առողջութեան դէմ։

—

Սպարապետութիւնն որոշեց որ հետեւակազօրաց սպայք եւս այսուհետև էշէն հագնին և այս մասին պէտք եղած հրահանգը տուաւ առ որ անկ է։

—

Սուրիոյ մէջ հրատարակեալ Էճէնէթ լրագրին իւր վերջին թերթոց մէջ սխալ և նահանգին Օսմ. Իշխանութեան շահուց ճնշասակար տեղեկութիւններ հրատարակած լինելով, երիս ամիս դադարման դատապարտեցաւ ներքին գործոց նախարարութեան հրամանաւ։

—

Ժուրնալ ատ Քոնսթանթինոպլ կը ծանուցանէ թէ Անգլիական դեսպան Լորտ Տըֆրին հատուցում պահանջեր է Բ. Դռնէն, Երուսաղեմի շրջակայքներն Անգլիական հրապատակ Վարդան անուն հայազգի բժշկի մը դէմ եղած անարգանաց համար։

—

Երէկ առաւօտ, չորս Պուլղարը, Բերայի թաղապետական պաշտօնատան փողոցին անկիւնը գտնուող պահականոցին առջեւէն անցնելու ժամանակ կռուի բռնուելով, մին դրպանէն բէվոլվէր մը հանեց և իւր ընկերներէն միոյն վրայ երեք անգամ կրակ ընելով, ոտքէն և գլխէն վիրաւորեց զայն, Ոճրագործն և իւր երկու ընկերները փախան, իսկ վիրաւորեալը Վոլվոտայի պահականոցը փոխադրեցաւ։

—

Կ. Պոլսոյ ընդհ. դատախազ Քոսթաքի Անթոռուլոյ էֆէնտի երէկ Եւրոպա ուղեւորեցաւ հրաժեշտով։

—

Երեք նպարավաճառք երէկ եօթիչ-իսկէլէսիէն նաւակ մը նստելով [illegible] Ստամբուլ, արքունի նաւարանի նաւակներէն մին անոնց նաւակին զարնուելով ընկղմեց զայն։ Մէկը գտնուող չորս մարդիկ ծովը թափեցան, բայց թէ՛ զարնող նաւակին և թէ՛ մօտակայ նաւակներու օգնութեամբ կրցին ազատիլ։

—

Ցայտնի է թէ Դարատաղի իշխանապետութիւնը ցարդ միայն բանակ չունէր՝ բացի իշխանին ձիաւոր թիկնապահաց խմբէն, որ 100 մարդէ կը բաղկանար։ Այժմ կ'երեւի թէ Դարատաղի կառավարութիւնը ժամանակիս պահանջմանց համաձայն զինուորական կազմակերպութեան մը հարկը ճանչած է, ըստ որում Զէթինեէէն կը ծանուցանեն թէ Նիքիթա իշխանն իւր երկրին մէջ վերջին օրերս ըրած ուղեւորութենէն վերադառնալէ յետոյ, հրամանագիր մը հրատարակած է, որով յառաջիկայ հոկտ. 1էն սկսեալ միայն բանակ մը կը հաստատէ։ Նիքսիչ, Զէթինեէ, Բուտկորիձա, Իւսինա և Ալիթիվարի քաղաքները մէկ մէկ միայն պահական զօրախումբեր պիտի ունենան, որոց իւրաքանչիւրն 1000 հետեւակազօրէ և 1 դումարտակ հեծելազօրէ պիտի բաղկանայ, և 1 լեռնային ու 1 դաշտային հրետանի պիտի ունենայ։ Այս զօրաց պահպանման ծախքն հոգալու համար նոր տուրք մը պիտի սահմանուի։ Իշխանապետութիւնն ի մօտոյ իւր թնդանօթաց թիւը պիտի աւելցնէ 5 դաշտային և 4 լեռնային հրետանիներ դնելով։ 30 երիտասարդք Ռուսիա պիտի ղրկուին թնդանօթաձգութեան արհեստը կատարելագործելու համար։

Այս միջոցիս արդէն 20 գարատաղցի երիտասարդք Ֆիորէնցայի և Միլանի և 20 ուրիշ երիտասարդք ալ Փարիզի զինուորական Ակադեմիային մէջ ուսում կ'ստանան։

—

Աթէնք հրատարակեալ Հելլենական լրագիր մը կը ծանուցանէ թէ 40 ի չափ Աւստրիական հպատակներ զանազան կերպարանքներու ներքև ծպտեալ, Սէլանիկ ելնելով՝ Մակեդոնիոյ ներսերը գնացեր են խռովութիւն յարուցանելու թաքուն նպատակաւ։

Թարիգ լրագիրը կը յուսայ թէ Սէլանիկի պաշտօնական լրագիրն այս մասին դոհացուցիչ բացատրութիւններ տալով կը փարատէ այս լուրին պատճառած մտահոգութիւնները։

Սակայն այս լուր մեծ մասամբ անհաւատալի կը թուի մեզ, քանի որ գիտենք թէ վերջին օրերս խիստ միջոցներ ձեռք առնուած են բոլոր Օսմ. նաւահանգստաց մէջ՝ անցագրոց վերաբերեալ նոր կանոնագիրը ճշդիւ գործադրելու համար։

—

Գերմանիոյ Հրէից խնամիները տեսնելով որ Եւրոպիոյ ամէն կողմն Հալածանաց և կեղեքմանց ենթակայ եղած են, վերջին օրերս Պերլինի մէջ ժողով մը գումարեր են այս վիճակին դարման մը խորհելու համար։ Թեպետ խորհրդակցութեան, նկատելով որ Հրէից կրօնքը բնաւորիչ կրօնքներու շղթայիր և Հրէից Ս. Գրքերուն մէջ բնաւ վերաւորիչ ակնարկութիւն մը չկայ, որոշեր են այս իմաստով յիշատակագիր մը հրատարակել, յորում Ս. Գրքերէն վկայութիւններ առաջ պիտի բերուին, և ամէն լեզուներու թարգմանելով տարածել աշխարհի չորս կողմը։

Թարիգ լրագիրն այս առթիւ դոհութեամբ ծանուցանելով թէ, Վեհ. Սուլթանին հովանաւորութեան ներքեւ ապրող Հոռեստ. ամէն տեսակ ապահովութիւն կը վայելեն, և թէ Թուրքիա բնակեալ այլակրօն ժողովուրդներէն բնաւ որ և է հալածում և կեղեքում չեն կրեր, կը խնդրէ խախամ էֆէնտիներէն որ գէթ յիշատակագիրը թուրքերէնի թարգմանելու ճանապարհը չ'սատանձնեն։

—

Վիէննայի Նայէ Ֆրայէ Բրէսէ լրագիրը կը ծանուցանէ թէ Կ. Պոլսոյ Պապական փոխանորդ Մոնսէնեօր Վանութէլի Պէլճիոյ մէջ ուրիշ պաշտօնի մը պիտի կոչուի։

—

Պուլղարիոյ կառավարութիւնը Սոֆիայի մէջ խորհրդարան մը հիմնելու ձեռնարկած է։

—

Բեռլրսպուրկէն յունիս 23 թուով կը գրեն թէ Նորատէնֆիլխթ թնդանօթին հնարիչ Պ. Նորատէնֆիլխթ ամսոյս 22 ին զանազան դրութեամբ վեց թընդանօթներ ներկայացուցեր է Ռուսիոյ կայսեր և մանրամասն բացատրութիւններ տուեր անոնց գործածութեան եղանակին վրայ։ Զարը մեծ ուշադրութեամբ ունկն դրեր է Պ. Նորատէնֆիլխթի բացատրութեանց։ Կայսրուհին, Լտիմպուրկի դքսուհին, Միքայէլ Ալէքսիս և Պօղոս մեծ-դուքսերն, ինչպէս նաև պատերազմական և ծովային գործոց նախարարք և այլ քանի մը զօրավարք և ծովապետք եւս ներկայ գտնուեր են յիշեալ թնդանօթաց քննութեան։

—

Իսկիւտարի Ամերիկեան հօմ աղջկանց վարժարանին տարեկան քննութիւնները պիտի սկսին յառաջիկայ ուրբաթ օր և վերջանան կիրակի։

—

Փիլիպէէն հետեւեալը կը գրեն Բորէսբոնտանս Բոլիթիք լրագրին.

«Հաւանական է որ Արեւելեան Ռումելիի քաղաքապահ զօրքը նոր հրամանատար մ'ստանայ։ Արդէն երկար ժամանակէ ի վեր այս փոփոխութիւն ծանուցուած էր։

«Արդի հրամանատար Տրիկալոքի փաշայի դիրքը զանազան պատճառներով խախտած լինել կը թուի, այնպէս որ ինք իսկ կը փափաքի կ.

Պոլիս կոչուիլ իւր նախկին դպրոցը վերատանձնելու։ Այս կարեւոր պաշտօնին համար առաջարկեալ ընտրելեաց մէջ՝ ոստիկանութեան հրամանատար Պորթուիք փաշա միայն առաջին տեղը կը բռնէ։ Բոյժ հաւանական է որ կուսակալ Կավրիէլ փաշա այս խնդրոյ վրայ Վեհ. Սուլթանին որոշումն իւր հետ բերէ։»

—

Դարդանէլէն հետեւեալը կը գրեն Սթանպուլ լրագրին.

«Նախընթաց իրիկուն Եւրոպայէն եկող անգլիական շոգենաւ մը իրեկուան ժամ 10 ին քառորդ մնացած՝ քաղաքին առջեւ հասաւ։ Եւրոպական եղերքի ամրութիւններն կանգ առնելու նշան տուին իրեն, քանի մ'ալ պարապ թնդանօթներ արձակելով, սակայն շոգենաւին հրամանատարը չպատասխանեց այս հրաւերին և խարիսխ նետեց։ Ցայնժամ հարկ եղաւ երեք ռումբ նետել, որք շոգենաւէն քիչ հեռի ալեաց մէջ թաղուեցան։ Թէպետ թնդանօթաձիգները ճարտար են, բայց մութ գիշեր մը կարելի է սխալիլ։ Անգլիական շոգենաւին հրամանատարն իւր շոգենաւն ու մէջը գտնուող մարդիկը մեծ վտանգի մ'ենթարկեց, չուզելով համակերպիլ այն կանոնագրին, որ Արեւելեան խոնարհելէն քառորդ ժամ առաջ կ'արգելու շոգենաւուց անցնիլ նեղուցէն։

«Այս օրերս քաղաքէս 5 հազար մէթրոյ հեռի 18-20 ամեայ երիտասարդի մը դիակը գտնուեցաւ, որոյ գլուխը մարմնէն բաժնուած էր և մարմնին սոսկալի կերպիւ յօշոտուած։ Մարդասպանք ծանօթ չեն, ոչ ալ ոճրագործութեան շարժառիթն։ Ոստիկանութիւնը քննութիւն բացած է»։

—

Ցունիս 20 թուով մայրաքաղաքէս հետեւեալը կը գրեն առ Բոլէսբոնտանս Բոլիթիք.

«Դեսպանական ակմբոց մէջ, Սերպիո-Պուլղարական վէճին նըկատմամբ Բ. Դրան բռնած ընթացքն ընդհանրապէս դոհութեամբ կը դիտուի։ Եթէ գործն աճապարուէր, թերեւս շարժման մէջ դրուէին այնպիսի տարրեր, որք կընային ծանր հանգամանք մը տալ տեղական պարզ վէճի մը։ Զրոյց կը պտտի ասա թէ Բ. Դուռը շրջաբերական մը ղրկած էր տերութեանց յորում կը գանգատէր թէ Սերպիոյ կառավարութիւնը Պուլղարիոյ դէմ ունեցած տրտունջներն ոչ թէ Բ. Դրան, այլ օտար տերութեանց ներկայացուցած էր. այս զրոյց բոլորովին անհիմն է։ Բ. Դուռը Սերպիոյ և Պուլղարիոյ Օսմ. գործակատարներէն այս խնդրոյ վրայ միայն տեղեկագիր մը խնդրելով չատացած է։ Ասոր պատճառը օա է թէ Բ. Դուռն ուրիշ խնդրոյ մը մէջ փորձառու եղած է թէ աշխարհավարութեան մէջ աւելի լաւ է համբերատարութեամբ դէպքերուն սպասել, քան ամենէն առաջ խօսք առնուլ։ Հետեւապէս, կ'ըսուի թէ, իւր դեսպանական ընդունելութեանց մէջ ի Բ. Դուռն, Ասիմ փաշա այս խնդրոյն վրայ լռութիւն պահած է, և միայն ցաւ յայտնած է թէ Թուրքիոյ հետ բարեկամական յարաբերութիւններ տածող երկրի մը ու Պուլղարիոյ միջև վէճ մը ծագած է։ Գալով դեսպանատանց, գրեթէ ամենքն ալ յոյժ քիչ կ'զբաղին այս խնդրով»։

—

Պոմպայէն յունիս 24 թուով կը հեռագրեն Ալէքսանդրիոյ անգլիական հիւպատոսին թէ յունիս 24ին վերջացած շաբաթուն մէջ քոլերայէն 1 մարդ միայն մեռած է ի Պոմպայ։

—

Սերպո-Պուլղարական վէճը կարգադրելու համար տերութեանց միջև սկսեալ բանակցութիւնք կը շարունակեն։ Սակայն միջադէպ մը յառաջ եկած է, որ թէ և ըստ երեւութին նուազ կարեւոր, բայց ի վերջոյ կրնայ ծանր հետեւանքներ ունենալ։ Ռուսական լրագիրը կը ծանուցանեն թէ Պելկրատի նախորդ Մէտրապոլիտ Տ. Միխայէլ, որ Սերպիոյ կառավարութեան անհաճոյ թշնամին և Սերպիոյ մէջ ազգասական ծայրայեղ կուսակցութեան կողմէ հանրային բարեկարգութեան ու անդորրութեան դէմ նիւթուած մեքենայութեանց հոգին է, Նիքիթա իշխանին կողմէ Գարատաղի առաջին Մէտրապոլիտ անուաներ է, պաշտօն մը, որ քանի մ'ամիսներէ ի վեր թափուր կը մնար։

Սերպիացի Մէտրապոլիտն՝ այս պաշտօնն ընդունելէ առաջ՝ Ռուսիոյ կայսեր հաւանութիւնն ստանալ ուզեր է, և կը վախցուի թէ այս վերջինը բնաւ ընդդիմութիւն չպիտի ընէ այս անուանման, զի Տ. Միխայէլ Փիէվի կղերանոցին նախկին աշակերտն և ռուսական աշխարհավարութեան ջերմ կուսակից մ'է։ Սերպիոյ կառավարութիւնն ստուգիւ չկրնար հաշտ աչօք տեսնել Պելկրատի նախորդ Մէտրապոլիտին փառաւորութիւն, որոյ ներկայութիւնը նիքիթա իշխանին արքունեաց մէջ՝ կրնայ մեծ ազդեցութիւն ունենալ Սերպիոյ հետ Դարատաղի ունեցած յարաբերութեանց վրայ։

ՀԵՌԱԳՐԵՐ

—o—

Թուլոն 1 յուլիս.
Ա. յսօր 7 մարդ մեռան քոլերայէն։
Մարսէլիա 1 յուլիս.
Ա. յսօր 3 մարդ մեռան քոլերայէն։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

—o—

ՀՐԱՒԷՐ

ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՍ

Ազգային ժողովոյ Ե. նիստը տեղի պիտի ունենայ ամսոյս 22ին ուրբաթ օրն ի Ս. Լուսաւորիչ Եկեղեցի Ղալաթիոյ։

Ատենը պիտի բացուի ժամ 2ին և գոցուի 5ին։

Հրաւիրեալ են Ազգային երեսփոխանք իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ։

Մնամ աղօթարար
Ի դիմաց Ս. Պատրիարք Հօր
Փոխանորդ Նորին
ԳԷՈՐԳ Ծ. Վ. ՐՈՒՍՃՈՒԳԼԵԱՆ
19 յունիս 1884

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Ատենական գործողութիւնք.
Բ. Շարունակութիւն վիճաբանութեան ի վերայ ԱԶԳ. ԿԵԴՐ. ԵԼՄԱՑՈՒՑՄԱՆ։
Գ. Առաջարկութիւն խառն ժողովոյ Ազգ. Վարչութեան ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ նկատմամբ։
Դ. Ընտրութիւն Գ. Ատենադպրի Մայր Դիւանի։

Ատենադպիր
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՇԱԿՈՒՆԻ

—

Պուքրէշէն 84 ստորագրութեամբ Պատրիարքարան եկած հանրագիր մը կը բողոքէ կրօն. ժողովոյ այն որոշման դէմ, որ Պուքրէշի Տէր Մինասի քահանան դադրեցուցած էր քահանայագործութեան պաշտօն վարելէ ի Պուքրէշ., և կը խնդրէ որ յիշեալ քահանան վերահաստատուի իւր պաշտօնին մէջ։

Ազգ. Պատրիարքարանն յառաջագոյն գրած էր տեղւոյն Ազգ. Հոգաբարձութեան որ յիշեալ քահանային մինչև ցարդ կրած վնասուց հատուցում մը լինի, քանի որ Տ. Մինասի Հայրն ըստ իրենց խնդրանաց, ոչ եւս պիտի վերադառնար ի Պուքրէշ քահանայութեան պաշտօնով։ Այս գրոյն պատասխանը մինչև հինգշաբթի կ'սպասուի, որոյ համար մասնաւոր հեռագիր մ'ալ ղրկուեցաւ երէկ Ազգ. Պատրիարքարանի կողմէ։

—

Վանայ նախորդ կուսակալ Հասան փաշա երէկ այցելութիւն տուաւ Ս. Պատրիարք Հօր։

—

Առաքել վարդապետ Մաղբմեան, որ կիւրինի մէջ բանտարկուած էր Մամուլ զաւեշտաթերթին մէջ հրատարակեալ ոտանաւորի մը ծանուցեալ խնդրոյն առթիւ, այս օրերս բանտէն արձակուելով, Երուսաղէմ գնացեր և Ամեն. Եսայի Պատրիարքին խնդրագիր մը գրելով, փափաք յայտներ է որ Երուսաղէմայ միաբանութեան մէջ ընդունուի։

—

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Սամաթիոյ Սահակեան վարժարանի նախկին աշակերտ Սիմոն էֆ. Յակոբեան, որ ժամանակէ մ'ի վեր իրաւագիտութիւն ուսնելու կ'զբաղէր, վերջին օրերս Պրուսայի մէջ փայլուն քննութիւն մ'անցնելով, Ա. կարգի փաստաբանութեան վկայական ստացած է։

—

Բօպէրթեան վարժարանի տարեկան հարցաքննութիւնք աւարտած լինելով, վաղը մրցանակաբաշխութեան հանդէսը պիտի կատարուի, և վկայական պիտի առնուն 22 ուսումնաւարտք, որոց եօթը են հայ են։ Հայ ուսումնաւարտից անուանքն են կարապետ Բ. Գարոնեան, Արամ Ն. Պետրոսեան, Գրիգոր Հ. Զաքարեան Պոլսեցի, Նշան Կ. Քոնտաեան Պարտիզակցի, Մակար Կ. Քեսաթիպեան և Լեւոն Կ. Քեսաթիպեան՝ Անդրիանուպոլսեցի, և Ստեփան Ք. Ա. Մատաթեան Զըմրկածագցի։

ԱԶԴ

Մեծ. Տօք. Թամամշէֆ որ մինչև այժմ Ռուսաց հիւանդանոցը և թեփէ պաշի թաղը հիւանդներու կը նայեր, ամառը մեծ կղզի Օթէկ ճաքօմօ տեղափոխուելով՝ շաբաթը երեք անգամ, երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, կամուրջի մօտ անուանի Ծանոթի դեղարանը կէս օրէն մինչև երեք ժամ (ալաֆրանկա) հիւանդները կ'ընդունի։

—

Ա Զ Դ

Կօսդա Լալէլի ճամի մօտ Զուգուր Զէշմէ փողոցին մէջ գտնուող համանուն երկու սեռի բաղնիքն, որ իւր կանոնաւոր բարեկարգութեամբն արդէն ծանօթ է Հասարակութեան եւ միանգամայն վկայեալ պատուաւոր անձերէ. այս անգամ նորա տնօրէնն, որ հայազգի մ'է, հրաւէր կը կարդայ Պատուարժան Հասարակութեան, որ ըստ առաջարկութեան բժշկաց, յաճախողներն աւելի եւս օգտեցնելու եւ գոհացընելու համար՝ յիշեալ բաղնիքին մէջ Եւրոպական դրութեամբ շինել տուած է պաղ եւ տաք անուշ ջրով ոռոգող յատուկ լոգարաններ (տուշ, պանիո), յորս յաճախորդք լուացուելով պիտի օգտին ֆիզիքապէս, առողջապահական ամենակարեւոր գործողութիւն մը կատարելով յանձինս։ 10—1

ԱՄՈՒՍՆԱԹՈՂՈՒԹԻՒՆ Ի ՖՐԱՆՍԱ

—

Ներակուտի ժողովը իւր յունիս 23 ի նստին մէջ շարունակեց ապահարզանի օրինաց վիճաբանութիւնը։ Նախորդ նստին մէջ վիճաբանութիւնն 234 րդ յօդուածին վրայ կանգ առած էր։ Կարգ մը յօդուածներ, 234 էն մինչեւ 274, առանց դիտողութեան ընդունուեցան։ Փոխադարձ հաւանութեամբ ամուսնաթողութեան վերաբերեալ [illegible] 275 էն մինչեւ 294 կը հասնէին, ընդունեցան առանց վիճաբանութեան, ըստ որում ժողովը արդէն մերժած էր անոր ընկերումը։ 295 էն մինչեւ 305 յօդուածոց ընթերցման միջոցին, կարճ վիճաբանութիւն մը տեղի ունեցաւ 298 րդ յօդուածին վրայ, որոյ երկրորդ պարբերութեան դէմ խօսեցաւ Պ. Տրմոլ, որ երկու սեռերու միջեւ կատարեալ հաւասարութեան ջերմ կուսակից մ'է. աւասիկ այս յօդուածին բնագիրը.

Երբ շնութեան պատճառաւ դատարանն ամուսնաթողութիւն վճռէ, յանցաւոր ամուսինը չպիտի կրնայ ամուսնանալ իւր մեղսակցին հետ։ Շնացող կինը, մի եւ նոյն վճռով եւ ընդհանուր դատախազութեան պահանջմամբ, պիտի կրնայ բանտարկութեան դատապարտուիլ որոշեալ ժամանակի մը համար, որ ո՛չ երեք ամսէն պակաս, ո՛չ ալ երկու տարիէն աւելի պիտի կրնայ լինիլ։

Տ. Տրմոլ պահանջեց ջնջել այս յօդուածին երկրորդ պարբերութիւնն, որ չափազանց խիստ է կնոջ համար։ Ներակոյտն հաւանեցաւ։ 305 րդ յօդուածն, ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ անգամ ջնջուեցաւ, հակառակ Պ. Տէլոսլի առաջարկած բարեփոխման։

306 էն մինչեւ 309 յօդուածներն յայտարարաբար քուէարկուեցան առանց վիճաբանութեան։ 310 րդ յօդուածը մեծ վիճաբանութեան մը առիթ տուաւ, որուն մասնակցեցան Պ. Պ. Լիւսիէն Պրէօն, Նաքէ, Ժիւլ-Սիմոն. Աւասիկ այս յօդուածին բնագիրը.

Ա. Նուազն երեք տարիէ ի վեր տրուած մարմնական բաժանման վճռագիր մը պիտի կրնայ ամուսնաթողութեան վճռագրի փոխուիլ, եթէ երկու ամուսնոց մէն աղերսագրով մը պահանջէ։

Ամուսնաթողութեան վճիռն հրապարակային նստի մը մէջ պիտի արձակուի այն դատարանին կողմէ, որ մարմնական բաժանումը վճռած էր։

Եթէ մարմնական բաժանման դատավճիռն այնպիսի դատարանի մը կողմէ տրուած է, որ այսօր չնջուած է եւ կամ դատավճռոյն տրուելէն յետոյ Ֆրանսայի հետ միացած երկրի մը մէջ կը գտնուէր, ամուսինք պիտի կրնան այն դատարանին դիմել, որ այս կարգի խնդիրներ դատելու ձեռնհաս է։

Պ. Լիւսիէն Պրէօն բողոքեց այս տրամադրութեան դէմ, որ իւր կարծեօք՝ կաթոլիկաց խղճի ազատութիւնը կը բռնաբարէ և անհընար կը կացուցանէ մարմնական բաժանումն, որովհետեւ երեք տարիէն յետոյ ամուսնաթողութիւնը մարմնական բաժանման հետեւանքը կը լինի ըստ վերոյիշեալ յօդուածին։ Պիտի առարկուի թէ, ըսաւ, կինը դիւրին և պարզ միջոց մ'ունի ամուսնաթողութենէ խոյս տալու, այն է ներել իւր ամուսնոյն. սակայն ենթադրենք թէ երեք տարին անցնելէ յետոյ, մարմնական բաժանման առիթ եղող տրտունջը միշտ գոյութիւն ունենայ, ամուսնական տան մէջ հաստատեալ հարճը միշտ հոն լինի, կաթոլիկ կինը գիտնայ թէ իւր բնակարանն կը շարունակէ պղծուիլ և ամուսինն ըսէ. «Օրէնքը կը պարտաւորէ զիս խնդրել ձեզնէ որ ամուսնական բաժանումը դադրեցնէք։ չեմ խաբեր զձեզ, իմ տանս մէջ բնաւ զըղջում չկայ. կը հաճիք այս պայմաններով մեր ամուսնական տունը վերադառնալ»։ Այս պարագային մէջ կաթոլիկ կինը միթէ կրնա՞յ ներել. այդ ներում տանջանք մ'է, զոր օրէնսդրին խիղճը իրաւունք չունի ուրիշին վրայ դնելու. ի վերջոյ ատենապանն՝ յանուն պարկեշտ կանանց՝ կոչում ըրաւ ժողովոյն ջընջել օրէնքէն վերոյիշեալ յօդուածն, որ ձեր յոռի օրէնքին մէկ յոռեգոյն տրամադրութիւնն է, ըսաւ։

Պ. Նաքէ՝ Պ. Լիւսիէն Պրէօնի պատասխանելով, նախ ըսաւ թէ խնդիրը լոկ պարկեշտ կանանց վրայ չէր, այլ և պարկեշտ արանց. ինք յանուն պարկեշտ ամուսնոց կը պաշտպանէր ամուսնաթողութիւնն։ Ապա ջնջուելու ցոյց տալ թէ խղճի ազատութիւնը բնաւ չբռնաբարուիր այս տրամադրութեամբ, վասն զի, ըսաւ, եթէ ամուսին մ'աւելի կամ նուազ երկայն ամուսնական բաժանում մ'ընդունելու իրաւունք ունենայ, պէտք չէ որ ամուսնական բաժանում չուզող ամուսինն անվերջանալի կերպիւ իւր վիճակին ենթարկելու իրաւունքն ալ ունենայ։ Ատենապանը՝ կրօնական նկատումներէ ծագում առնող մտահոգութեանց ակնարկելով՝ ըսաւ թէ Ֆրանսայի քով ուրիշ ազգ մը կայ, Պելճիա, որ դեռ վերջին օրերս կաթոլիկ երեսփ. ժողով մ'ընտրեց, և այս բան պատճառ եղաւ կաթոլիկ նախարարութեան մը կազմութեան. յառաջագոյն ևս մերթ ընդ մերթ կաթոլիկ նախարարութիւններ կազմուած էին։ Արդ, միթէ Պելճիոյ կաթոլիկ երեսփ. ժողովները, կաթոլիկ նախարարութիւններն, արդի կաթոլիկ նախարարապետ Մալու և իւր համակարծիք նախորդներն երբէք պահանջեցի՞ն ամուսնաթողութեան ջնջումը կամ 310 րդ յօդուածին բարձումը. չեմ կարծեր և չեմ հաւատար որ նոր նախարարութեան հիմնագրոյն մէջ այսպիսի տրամադրութիւն մը դնուի։ Աւելի դիւրին է օրէնքէն բառնալ քան թէ անոր մէջ մուծանել այսպիսի տրամադրութիւն մը. և եթէ կաթոլիկ կուսակցութիւնն իւր կրօնին դէմ հարուած մը համարեր զայն, կ'ըսէր նոր նախարարութեան. «Ջնջեցէք ամուսնաթողութիւնը»։ Սակայն ճշմարտութիւնը սա է որ ամուսնաթողութիւնն հակառակ չէ կաթոլիկ կրօնքին, զի կաթոլիկ կրօնքին մէջ պատասխանատուութիւնք անձնական են, և ինչպէս որ յետ ամուսնաթողութեան վերստին չամուսնացող ամուսինն չմեղանչեր, նոյնպէս չմեղանչեր այն ամուսինն որ յետ ամուսնաթողութեան վերստին կ'ամուսնանայ։ Պ. Նաքէ ուրիշ փաստ մ'ալ յառաջ բերաւ, որուն ոչ ոք պատասխանած էր նախորդ նիստերուն մէջ։ Ըսաւ թէ Հռոմայ Պապին եւ Աւստրիական կառավարութեան միջեւ կնքեալ պայմանագրի մը զօրութեամբ, կաթոլիկներն ու Բողոքականները խառն ամուսնութիւններ կնքելու արտօնութիւն ունէին Աւստրօ—Հունգարիոյ մէջ։ Արդ, եթէ ամուսինք ըստ օրինի իրարմէ բաժնուին, կաթոլիկ ամուսինը չամուսնանար, բայց Բողոքական ամուսինը վերստին ամուսնանալու իրաւունք ունի։ Պ. Նաքէ վերջացուց իւր ճառը դիտել տալով թէ Աւստրիոյ մէջ, ուր կրօնական իշխանութիւնը թոյլ կուտայ խառն ամուսնութեանց, կաթոլիկ ամուսինը չկրնար նորէն ամուսնանալ յետ ամուսնաթողութեան, մինչդեռ Բողոքական ամուսինը կրնայ. արդ, առաջինն այն վիճակին մէջ կը գտնուի, յորում պիտի գտնուէր եթէ մարմնական բաժանումը միայն արտօնեալ լիներ։

Յետոյ Պ. Ժիւլ Սիմոն բեմն ելնելով, ըսաւ թէ ինք ոչ եւս պիտի վիճաբանի ամուսնաթողութեան վրայ, այլ իւր վիճաբանութիւնը պիտի սահմանափակէ 310 յօդուածին վրայ. Նոյնպէս, ո՛չ թէ կրօնական, այլ քաղաքական օրինաց տեսակետով պիտի քննէ զայն։ Ինք անարդար կը գտնէ այն ձեւափոխութիւն, զոր ժողովը կ'ուզէ մտցունել մարմնական բաժանման մէջ, լոկ օրինաց բնագրին զօրութեամբ, առանց թոյլ տալու դատարանաց որ կարենան իրենց վճիռն արձակել։ Այս բան կը նշանակէ պարզապէս մարմնական բաժանումը ջնջել, զի այսուհետեւ ամուսնաթողութիւնը կ'սպառնայ ամէն բաժանեալ ամուսնոյ։ Ուստի կաթոլիկաց խիղճերը կը վիրաւորէ, զի ամուսնական բաժանումն ոչ եւս գոյութիւն պիտի ունենայ իրապէս, այլ ցնորք մը պիտի լինի և անմիջական ու պայմանաժամով (երեք տարիէն յետոյ) ամուսնաթողութիւնք միայն գոյութիւն պիտի ունենան։ Պ. Լիւսիէն Պրէօն յանուն խղճի ազատութեան խօսեցաւ, բայց ես յանուն արդարութեան սկզբան կ'ըսեմ թէ 310 րդ յօդուածով ո՛չ թէ ամուսնաթողութեան հնարաւորութիւն տալ կ'ուզուի, այլ իրրեւ հարկ մը կը դրուի ամուսնոց վրայ. ահա քմահաճութիւնն։

Ի վերջոյ Պ. Ժիւլ Սիմոն պատուաւոր պայմաններու մէջ իւր ամուսնէն բաժանեալ կնոջ մը նամակը կարդաց, յայտարարող թէ, ինք թէև իւր ամուսնէն բաժանեալ, բայց բացարձակապէս կը մերժէ ամուսնաթողութիւնը, վասն զի չուզեր իւր որդւոց անունն անպատուած տեսնել այն ամուսնութեամբ, զոր իւր ամուսինը պիտի կնքէ իւր անարժան հարճին հետ։ Ահա օրէնքն այս վիճակին պիտի դատապարտէ չատ մը պարկեշտ կիներ։ Պոռնիկ կանայք երկրորդ ամուսնութեամբ ճակատաբաց պիտի մտնեն մինչև ցայն վայր սուրբ մնացած ընտանեկան յարկ մը, ուր օրինաւոր մայրը յուսահատութեան և իւր հարազատ զաւակներն ալ ամօթոյ և անպատուութեան պիտի դատապարտուին։ Պ. Ժիւլ Սիմոն ժողովոյ ուղղամտութենէն, անկողմնակալութենէն և խիղճէն ու արդարասիրութենէն պահանջեց որ կինն առանց դատաստանի յուսահատութեան չդատապարտուի, եթէ ամուսինն՝ ամուսնական բաժանումն երեք տարի յետոյ, 310 րդ յօդուածին զօրութեամբ ամուսնաթողութիւն խնդրէ։

Ժողովը իւր յունիս 24 ի նստին մէջ շարունակեց յիշեալ յօդուածին վիճաբանութիւնը։ Պ. Էմիլ Լապիշ, յանուն ապահարզանի յանձնաժողովոյ, ծանոյց թէ 310 րդ յօդուածին տեղ նոր յօդուածի մը խմբագրութիւնը բերած էր, զոր յանձնաժողովը միաձայնութեամբ ընդունած էր և որոյ վրայ Պ. Պ. Ժիւլ-Սիմոն, Նաքէ և այլ ընդդիմաբանք համաձայնած էին։ Աւասիկ 310 րդ յօդուածին նոր խմբագրութիւնն.

Եթէ ամուսնական բաժանումն երեք տարի տեւէ, դատավճիռը պիտի կրնայ ամուսնաթողութեան դատավճռի փոխուիլ, եթէ ամուսնոց մէն պահանջէ։ Նախագահին կողմէ տրուած հրամանագրի մը զօրութեամբ, պէտք է որ ճիշդ ութ աւուր մէջ ուղղակի կոչնագրով հրաւիրուի այս պահանջման տէրն, որոյ փաստերը դռնփակ նստի մը մէջ պիտի քննուին։

Հրամանագիրը տեղեկաբեր դատաւոր մը պիտի անուանէ, իրողութիւնն ընդհ. դատախազութեան հաղորդել պիտի հրամայէ եւ դատաստանի օրը պիտի որոշէ։

Դատավճիռն հրապարակաւ պիտի տրուի։

Հաղիւ այս նոր խմբագրութիւնը կարդացուեցաւ, Պ. Լուսիէն Պրէօն յայտարարեց թէ ինք 310 րդ յօդուածին ջնջումը կը պահանջէր միշտ։

Պ. Պ. Պերանժէի, Էմիլ Լապիշի և Լուսիէն Պրէօնի միջեւ վիճաբանութիւն մը ծագեցաւ, յորմէ յետոյ նոր խմբագրութեան առջին երկու պարբերութիւնները քուէի դրուելով, 241 դէմ 177 ձայնիւ ընդունուեցան։ Յօդուածին վերջին երեք պարբերութեանց վրայ նոր վիճաբանութիւն մը ծագեցաւ. Պ. Պերանժէ հարցուց թէ ինչո՞ւ հաւատարիմ խնդիրը դռնփակ նիստի մը մէջ պիտի դատուի, և ոչ թէ հրապարակաւ. եթէ դատարանք հարկ տեսնէ, կրնան դռնփակ նիստ ընել, սակայն դատավարութիւնն սկզբամբ հրապարակային պէտք է լինի. առանց այս պայմանին չկ'դատավարութիւն։

Ժողովը Պ. Տէնորմանտին լսելէ յետոյ, որ այս նոր խմբագրութեան հեղինակն էր, քուէարկութեան ձեռնարկեց և 54 ի դէմ 139 ձայնիւ ընդունեց 310 րդ յօդուածին նոր խմբագրութեան վերջին երեք պարբերութիւններն ևս, որով յիշեալ յօդուածին նոր խմբագրութիւնն ամբողջապէս ընդունուած եղաւ։ Ժողովը ապա առանց վիճաբանութեան ընդունեց ամուսնաթողութեան օրինաց վերջին յօդուածներն։

Երբ կարգն ամբողջ օրէնքը քուէարկելու եկաւ, Պ. Լա Բազ խօսք առնլով, ամբողջ օրէնքին դէմ խօսեցաւ, և ըսաւ թէ հանրային կարծիքն անպատշաճ է ամուսնաթողութեան, ինչպէս նաեւ անհայտ է օրէնսդրութեան հետ։ Գերմանիոյ մէջ իսկ, որ բողոքական երկիր մ'է, հանրային կարծիքն աւելի թշնամի է ամուսնաթողութեան քան նպաստաւոր։ Սէն-Վալիէ կոմսն, որ երբեմն Պերլինի մէջ ֆրանսական դեսպան եղած է, ընդմիջմամբ հաստատեց այս վերջին խօսքը։ Վերջապէս ատենաբանն ըսաւ թէ ամուսնաթողութիւնն իւր կարծեօք ֆրանսական ժողովրդեան մտաց և սրտի ստորնացում մը կը նշանակէ։

Այս բանախօսութենէն յետոյ, ժողովը քուէարկութեան ձեռնարկեց և 116 ի դէմ 153 ձայնիւ ամուսնաթողութեան օրէնքին ամբողջութիւնը քուէարկեց որով հաստատեց թէ ինք Պ. տը Լա Բազի պէս չէր խորհեր։

ԳՐԱԴԱՏԱԿԱՆ

—o—

. . . Խմբագրապետ Տէր,

Պատուական Մասիսիդ 3703 թուոյն յունիս 6 թուականութերթին մէջ ԱՂՈՒԻՍ ԵՒ ՕՁ վերնագրով առակ մը տեսնուեցաւ Աղէքսանդր կ. Փանոսեանի ստորագրութեամբ։

Այդ մի և նոյն առակն տպագրուած է 1880 ին Ցիմակ տարեգրքի մէջ, գործ հեղինակութեան Տէր Մինասեան Վահան վարդապետի։ Առակ մը կրնայ գրուիլ տարբեր անձերէ և ոչ ոք իրաւունք ունի առակին բացարձակ հեղինակն լինելու, քանի որ առակին բուն տէրը նոյն իսկ ժողովուրդն է. սակայն ինչպէս ամեն գրուածոց՝ նոյնպէս առակագրութեան մէջ հետաւորութիւնը պէտք է նշանակուի, որպէս զի չընսեմանայ այն փառքն, որ կ'ստանայ գրագէտ մը առաջին անգամ ժողովրդական ծնունդի մը մարմին և հոգի տալով։

Այս կարգէն է նաեւ Փանոսեանի այդ առակն, որ կատարելապէս հետաւորութեամբ մարմին և հոգի զգեցած, այսինքն ի գիր առնուած է. ուստի մեք Փանոսեանի այդ առակն ընթեռնլէ յետոյ՝ հարկ համարեցանք Վահան վարդապետի առակն ալ վերընթեռնուլ, և բաղդատութիւն գտնել այս երկու երիտասարդ հանճարներու միջեւ։ Ազգի մը մէջ հանճարն առաւել ևս կը քաջալերուի, երբ բաղդատական անաչառ քննադատութիւն մը ի վեր կը հանէ այդ հանճարին տկարու թիւն, կամ բարձր ու վսեմ կողմերը։

Ահա այս տեսակէտով՝ այսինքն ազգային գրական մի կարեւոր ճիւղին ծառայութիւն մ'ընելու գովելի փափաքով՝ համարձակեցայ քանի մը տող գրել և երկու առակախօսներու գրական տաղանդին վրայ տեսութիւն մ'ընել։

Փանոսեանի առակին մէջ արուեստը կը փայլի, իսկ Վահան վարդապետի առակին մէջ մի անպաճոյճ պարզութիւն. Փանոսեան աղդին ուսումնական դասուն հետ կարծես կը խօսի, իսկ Վահան վարդապետ ժողովրդեան ստորին դասուն հետ։ Փանոսեան ընտիր բառերու գործածման հետաքրքրաշարժ ընտրելագոյն ձեւ մը տալ կը նայի իւր երկին, իսկ Վահան վարդապետ չէ խնայեր ժողովրդական գռեհիկ բառ մը անգամ անտես և անուշադիր թողուլ։ Վերջապէս մին՝ Փանոսեան դէպ ի վեր երկինք ելնել կը ճգնի, և իւր գոհարը աստեղաց կամարէն կախել, իսկ միւսը դէպ ի ստորինս ի խաւս մթին խոնարհիլ կը նայի և լոյս սփռել իւր գոհարովն նոցա, որք նստին ի խաւարի և ի ստուերս մահու. ահա այս է երկու առակախօսներու տարբերութիւնը։ Սակայն երբ նկատուի թէ Փանոսեան փորձ է Եւրոպական լեզուաց վարժութեամբ. հսկ [illegible] պէտ բաց ի հայկական լեզուէ մը ոչինչ գիտէ, յայնժամ, վերջինդ՝ Վահան վարդապետ ազգային գրագէտի զուտ տիպը կ'առնու, և ահա յայսմ իսկ է իւր մեծագոյն փառքն ու յաղթանակ։

Ահաւասիկ Յիսանակ Առակի այդ առակը (*)։

* * *

ԲԱՐԲԵՐԴ

. . . Խմբագրապետ Տէր,

Տեղւոյս բնակչաց և երկրին այլ և այլ հանդամանաց վերայ գրել ուրիշ առիթի թողլով, կուզամ ներ-

(*) Մեր վաղուան թուով պիտի հրատարակենք Վահան վարդապետի այդ առակը։

ԹԵՐԹՕՆ ՍԱՍԻՍԻ

(31)

ՖՕՐԹԻՒՆԷ ՏԻՒ ՊՈՒԱԿՕՊԷ

—o—

ԳԱՂՏՆԻՔ ՆՈՐ ՓԱՐԻԶԻ

—=—

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

—

ՍԱՏԱՆԱՑԻՆ ՀԱՆՐԱԿԱՌՔԸ

Ժ.

վերջն հարստացած, և նորա պէս մնանկացած էր ապա, և մի և նոյն ծագումն ունեցած, և մի և նոյն դժբաղդութիւնները կրած լինելով, անձուկ բարեկամութեան կապեր հաստատուած էին իրենց մէջ։

— Այսպէս ի միասին ապրեցան մինչ այն օրն, ուր Բօպինիէ վախճանեցաւ. . .

— Այո՛, աւելի վշտի, քան թէ որոշ հիւանդութեան մը զոհ երթալով. հայրս հարիւր անգամ պատմած է ինձ թէ Օպրի-լը-Պուշէ փողոցին մէջ իրենց ունեցած խեղճ բնակարանին մէջ ամբողջ օրեր կ'անցընէր պատուհանի մ'առաջ նստած, արեւմուտքէն Ամերիկայէն եկող ամպերը դիտելով, և օտար տունկ մը, ծաղիկ մը ջնելով, զոր գնած էր և զոր կը խնամէր, վասն զի բան մ'ալ չունէր իրեն թէ Գալիֆօրնիայէն բերուած հունտէ մը յառաջ եկած էր։

— Իւր որդւոյն վրայ կը խորհէր, այնպէս չէ՞։

— Մի միայն անոր վրայ կը խորհէր. յաճախ, երեկոյեան դէմ, երբ օրը կը տարաժամէր, կ'ըսէր. «Աւասիկ այն ժամն յորում արեգակը կը ծագի Նեվատայի մէջ, այն ժամն յորում Մարսէլ կ'երթայ ոսկի փնտռելու. կը տեսնեմ զայն, լայնափող հրացանը կրընակը զարկած, և հանքահանի բրիչը ձեռքը բռնած. հուժկու, արիասիրտ է. հարուստ պիտի վերադառնայ. Աստուած, որ զիս կը հարուածէ, պիտի վարձատրէ զիս յանձին իմ որդւոյս։

Երբեմն ևս, երբ օդն ամպամած լինէր, երբ մրրիկ մ'անցնէր փարիզի վրայէ, կը մրմնջէր. «Անապատն ընդարձակ է, ծովն անհուն. . . մինակ է Մարսէլս, մինակ մարդոց, վայրի դազաններու, Ովկիանոսի կատաղութեան դէմ. ո՞վ պիտի պահպանէ զայն նեսէն, որ ցերեկ ատեն կը սուրայ, և մգրէն, որ գիշերուան մթութեան մէջ կը թափառի։»

— Զէ՞ր ըսեր նաեւ. Ա՛հ, Աստուած իմ, անգամ մ'ալ տեսնէի զայն, հարցուց Մարսէլ հառաչանք մը զսպելով։

— Ոչ, բայց դաղտնի կը յուսար. երբ կրնար քալել դեռ, ամեն օր քչքչուելով կ'երթար հօրս մէկ բարեկամին տունն, որ Նիւ-Եորքէն և Հավրէն թերթեր կ'ընդունէր, և չոգենաւերուն վրայ գտնուած բոլոր ուղեւորներուն անունը կը կարդար. յետոյ հասաւ օր մը, ուր հիւանդութիւնը դամեց զայն թիկնաթոռի մը վրայ. հայրս կը տանէր այդ թերթերը խեղճին, որ, առանց բառ մ'արտասանելու, նորա ձեռքը սեղմելով, շնորհակալութիւն կը յայտնէր. դիւրին էր մակաբերել թէ սոյն դժբաղդ ծերունին որդւոյն բացակայութեան համար կը մեռնէր։

— Լռութեանը համար չէ՞ր կշտամբեր. . . սոյն որդին. չանիծե՞ց զայն։

— Զայն օրհնելով և նորա անունը մրմնջելով հոգին աւանդեց։

— Դէթ Միշել Պրէվան չէ՞ր զարմանար թէ ինչո՞ւ համար Մարսէլ Բօպինիէ իւր հօր չէր նպաստեր, թէ ինչո՞ւ համար չէր գրեր դէթ։

— Հայրս գիտէր թէ Մարսէլ անհաստատ և վտանգալից կեանք մը կը վարեր Ամերիկայի մէջ և երբէք ամբաստանած չէ զայն։

— Այն ժամանակ Մարսէլ Նոր Մեքսիկայի մենութեանց մէջ կորսուած էր, և ամեն օր իւր կեանքն ի վտանգի դնելով կը կռուէր Հնդիկներու և բաղդախնդիր ոսկեխոյզներու դէմ. քաղաքներէ երեք հարիւր մղոն հեռի կը թափառէր, և որսորդութեամբ միայն կ'ապրէր. բնաւ յիշողութիւն չէր դրած, և երբ Սան-Ֆրանչիսկօ վերադարձած պահուն սոյն ձախող դիմն առաւ, այնքան աղքատ էր որքան այն օրն յորում գրպանն ինը դահեկան ունենալով՝ Դալիֆօրնիա ոսոք կոխած էր. վեց ամիս յետոյ, Սիէրա-Նեվատայի ոչ շահագործեալ մէկ անկեան մէջ ոսկեհանք մը գտնելով հարստացաւ. . . բայց չատ ուշ։

Կը հասկնաք այժմ, Սավինիէն, թէ ինչո՞ւ համար Մարսէլ, որ իւր հանքը շահագործելու համար չկրնար հեռանալ, ինձմէ, իւր լաւագոյն բարեկամէն խնդրեց խուզարկել այն անձերն, որք իւր հօր վերջին վայրկեանները մեղմացուցին. կը հասկնաք թէ ինչո՞ւ համար կը սիրեմ զձեզ։

Երիտասարդը խանդաղատանօք սեղմեց այն ձեռքը, զոր միլիոնատէրը կը կարկառէր իրեն. ինք եւս անոր չափ յուզեալ էր։

— Միշէլ Պրէվան իւր բարեկամէն երբէք չբաժնուեցաւ, այնպէս չէ՞, հարցուց Միշել պահ մը լռութենէ վերջ. նորա մահուան անկողնոյն մօտ էր, այնպէս չէ՞։

— Այո՛, նորա վերջին շունչն ընդունեց, և նորա դագաղին ընկերացաւ մինչեւ գերեզման. դժբաղդաբար այն պահուն, ուր Պ. Բօպինիէ մեռաւ, հայրս կորսուած էր պաշտօն մը, որ իւր ապրուստի միակ միջոցն էր. դժուարաւ կրցաւ հոգալ յուղարկաւորութեան ծախքերն և վճարել այն գումարն, որ առժամանակեայ գերեզմանի մը համար կը պահանջուէր։

— Այո՛, գիտեմ, և երբէ՞ երբ օրհնեալ պատեհութեամբ մը օրիորդ Սէսիլի հանդիպեցայ, դնացած էի խուզարկել այն գերեզմանը, զոր Մարսէլի հայրը ձեր հօր կը պարտէր. բայց այլ եւս կորսուած էր։

— Աւաղ, պարոն. ո՞րքան կը փափաքէի այդ հողը կրկին գտնել, բայց ստակ չունէի, և չկրցի հօրս սոյն գերադոյն կամքը կատարել, ո՛չ ալ կրցայ նոյն իսկ իրեն գերեզման մ'ապահովել, ուր կարենար խաղաղ ննջել, թէեւ ամենէն սաստիկ զրկողութեանց ենթարկեցի զանձս։

— Ձեր սրտին ազնուութեան մասին երբէք կասկած չունիմ, ըսաւ Մարսէլ աչխուժիւ. բայց թողունք սոյն տխուր յիշատակներն, և ձեր վրայ խօսինք, բարեկամս, ձեր կացութեան, ձեր դիտաւորութեանց, և ձեր յոյսերու վրայ։

— Այդ նիւթն ալ ուրախաւէթ չէ. ըսի ձեզ թէ հայրս իւր պաշտօնը կորսուած էր. խնայողութեամբ աւելցուցած դրամները չուտով սպառեցան, և Պ. Բօպինիէի վախճանումէն քիչ ժամանակ վերջ Անգլիայէն վերադառնալ ստիպուեցայ, որովհետեւ գիշերօթիկ վարժարանին վճարումները չկրցինք ընել. նախ բնաւ պաշտօն մը չդտայ, և բաց աստի չէի կարող բաժնուիլ հօրմէս, որոյ առողջութիւնն որ ըստ օրէ կը վատթարանար. Ի՞նչ հարկ երկարել, պարոն, մանցածը կրնաք դուշակել արդէն. նեղութեան յաջորդեց չքաւորութիւնը։

— Այո՛, կը դուշակեմ. Միշել Պրէվան ինքզինքն իւր բարեկամին զոհելէ վերջ, թշուառութեան մէջ մեռաւ, բայց դուք, Սավինիէն, դուք, երիտասարդ, արիասիրտ, ուսեալ եիք, լաւագոյն կացութեան մը տէր կրնայիք լինիլ։

— Ընտիր դաստիարակութիւն մ'առած էի, այո՛, անգլերէն, գերմաներէն, իտալերէն գիտէի, բայց յուսով նշմարեցի որ այս դաստիարակութիւնն, որու համար այնքան ստակ վատնուած էր, մեծապէս օգտակար չպիտի լիներ ինձ այս քաղաքին մէջ, յորում պաշտօններն իրարու ձեռքէ կը խլուին, և յորում ծանօթ մը չունէի բնաւ. ամեն դուռ դոցուեցաւ իմ առաջ, և մինչեւ անգամ իբր դաղթական Նոր-Գալէտօնիա երթալու համար արձանագրուիլ պատրաստուեցայ. բայց իմ դժբաղդութեանցս պատմութիւնն ընել չափազանց երկար կը լինի. բաւ է որ անմիջապէս ըսեմ ձեզ թէ բաղմաթիւ ձեռնարկներէ և յուսախա-

(Շարունակելի)

կայիւս մի քանի խօսք ըսել նկատմամբ ատոր դրուած մարտ 20 թըւակիր յօդուածի մը վրայ, զոր կարդացինք Արեւելք լրագրոյ մէջ։

Յօդուածի մի մասն է հետեւեալ յայտարարութիւնը թէ Առաջնորդ սրբազանն մի յատուկ թղթիր գրելով փաշային՝ իւր պաշտօնի անվրճաբ մնացած ամսականներն պահանջել կը խնդրէ։ Կանխաւ զմ։ Հայրն ապահոված են ոմանք ժողովականք իրենց ստորագրութեամբ, ուստի բողոքը կը դառնայ անոնց վրայ։ Նոքա՞ ալ ի պատասխանի կը յայտնեն փաշային և Սրբազանին թէ Առաջնորդական եղ և մուտ և բոլոր հաստոյթք միայն իրեն՝ Սրբազանին, տրամադրութեան ներքեւ կը մնային։ Ելն։

Նոյն յօդուածի արդոյ հեղինակն, անտարակոյս եմք թէ բարեմտաբար գրած է։ ուստի և կ'ըսեմք թէ այսպէս չպիտի դրէր յօդուածի այն կէտն՝ եթէ գործին ի մօտոյ և ըստ բաւականին հասու և գիտակից եղած լինէր։ Քարբերդի առաջնորդի անվճար ամսականներն ոչ ըստուածին չափ են և ոչ ալ թագրիրն լրջութեամբ ներկայացեալ է։ Ով չգիտեր թէ մերթ կը պատահին պարագայներ յորում մարդ կ'ստիպուի առնուլ այն դիրք և այն պիսի դէմք, որով և եթէ զօրաւորն գոհ ընել և հանդարտել հարկ կը տեսնուի։ Քարբերդցին անկարող և սիրող չէ երբէք իւր առաջնորդին ամսականներն անվճար թողուլ. և նոյն իսկ ժողովականաց անորոշ և առաձգական պատասխանէն կըրնայ մակաբերիլ թէ թագրիրն չը գրուած զժողովականս կառավարութեան մատնելու և ամսականներն նոյն եղանակու ստանալու դիտմամբ, այլ մի բացառիկ և փափուկ նպատակաւ, զորմէ ատանօր աւելին քան զայս բացայայտ գրել անպատշաճ կը համարիմ։

Խնդրեմ Մեծ. Ցէր, ներկայիս մի անկիւն շնորհէցէք ձեր ազգօգուտ թերթի մէջ։ * * *

1 յունիս 1884 Քարբերդ

ԱՌՈՂՋԱՐԱՆԱԿԱՆ

—o—

ԱՂԴԵՑՈՒԹԻՒՆ ՋՐՈՑ

—

Ջրոյ տարբաբանական և բնագիտական յատկութեանց և կամ անոր բաշխման և ընտրութեան եղանակաց վրայ խօսիլ մեր նպատակէն դուրս է։ հոս մի միայն պիտի խօսիմք խմուած ջրոյ մեր առողջութեանը վրայ ըրած ազդեցութեան։

Գիտեմք որ ջուրը մեր անհրաժեշտ պիտոյից մին է, և առանց անոր անկարելի է ապրիլ. վասն որոյ մարդիկ ի սկզբանէ անտի իրենց բնակութիւնը ջրոյ մօտերը հաստատեր են և աշխարհիս ամենէն աւելի վաճառաշահ և բազմամարդ քաղաքներն, որպիսի են, Լոնտոն, Փարիզ, կ. Պոլիս ևն. գետեղերեայ կամ ծովեղերեայ են, ըստ որում ջուրը ո՛չ միայն մեր պիտոյից կը ծառայէ, այլ և փոխադրութեան համար ալ մեծամեծ դիւրութիւններ կ'ընծայէ մեզ. ահա այսպիսի ամենակարեւոր նիւթոյ մը մեր առողջութեանը վրայ ըրած ազդեցութիւնը գիտնալ պէտք է նա մանաւանդ ամառը, յորում մեր խմած ջրոյ քանակութիւնը զգալապէս կ'աւելնայ։ Քանի որ խօսքը քանակութեան վրայ է, մենք ալ նախ և առաջ ջրոյ քանակութենէն սկսինք և մի ըստ միոյէ խօսինք առնոր պաղութեան, տաքութեան և այլ հանգամանացը վրայ։

Մեր կենաց պահպանութեանը համար հարկ անհրաժեշտ է չափաւոր քանակութեամբ (գրեթէ մէկ լիտր) ջուր խմել։ Արդարև ջուրը մեր կազմուածքին հիմն է, և միշտ անփոփոխ և անայլայլելի համեմատութեան մը մէջ կը մնայ, և թէ՛ մարմնոյ հիւսուածոց և գործարանաց ամբողջացուցիչ մէկ մասն, և թէ՛ արեան ու հիւթոց ամենակարեւոր տարրներէն մին կազմէ։

Ջրոյ մէկ մասը յարաժամ կ'արտաքսենք ի մէնջ մորթային և թոքային արտաշնչմամբ, մէզով, աղբով ևն. անշուշտ այս կորուստը փոխարինելու համար վերստին ջուր ներմուծելու պէտք ունինք, որպէս զի հաւասարակշռութիւնը չվնասդարի. այս ալ ապացուցեալ է թէ խմուած ջրոյ քանակութիւնը որչափ չատ ըլլայ, մարմինը իր պիտոյից եւեթ գոհացնելով կը բաւականանայ. իսկ աւելորդ մասն կ'արտաքսէ այլ և այլ արտահոսմանց միջոցաւ, նա մանաւանդ քրտինքով և մէզով. սակայն և այնպէս չափէն աւելի խմուած ջուրը անպատեհութիւններէ զերծ չէ, նախ՝ ստամոքսը լեցուելով կ'ընդլայնի, երկրորդ՝ ստամոքսային հիւթը լուծուելով՝ չկրնար կերակրոց վրայ արդիւնաւորապէս ազդել. հետեւաբար չափազանց ջուրը ոչ միայն մարսողութիւնը չդիւրացներ, այլ ընդհակառակն եւս առաւել կը դժուարացնէ։ Շատեր այնպէս կը կարծեն թէ կերակրոյ վրայ որչափ աւելի ջուր խմուի՝ այնչափ դիւրաւ կը մարսուի. սակայն ահա գիտութիւնն ու փորձառութիւնը կ'ուսուցանեն թէ չափազանց ջուրը հակառակ կերպիւ կ'ազդէ, զի այն ատեն կերակրոց պատառները կը լողան ստամոքսին մէջ և արդէն ըստ ամենայնի հիւթն ալ այլալած լինելով՝ չկրնար կանոնաւորապէս ազդել. մարսողութիւնը դիւրացնելու միջոցը չէ թէ չափէն աւելի ջուր խմելէ՝ այլ չափաւոր ու կանոնաւոր կերուխումէ և մարմնական կըրթութիւններ ընելէ կախումն ունի։ Չափազանց ջուրն տկարութեան ալ պատճառ կ'ըլլայ, որովհետև ըստամոքսը կը հոգնեցնէ, թէև այս հոգնութիւնը կարճատեւ է, վասն զի սեւ երակներն խսկոյն ջուրը կը ծծեն և քրտինքի ու մէզի միջոցաւ կ'արտաքսեն. բայց և այնպէս մարմինը կը տկարանայ, որովհետեւ քրտինքի և մէզի միջոցաւ ելած ջուրը զուտ վիճակին մէջ չդանուիր, այսինքն մտածին պէս չելլէր, այլ արտահոսման արդիւնքն լինելով կը թանձրանայ և կ'այլայլի, հետեւաբար մարմնոյ տկարութեան պատճառ կ'ըլլայ։ Չափազանց ջուրը երբեմն ալ թանչ կը պատճառէ։

Պ. Տանէլ ի մասնաւորի կենդանեաց վրայ ըրած փորձերուն յենլով՝ կ'ընդունի թէ չափազանց առատութեամբ ընդունուած ըմպելեաց հետեւանք լինելով՝ մարմինը կը պարարի և ծիծ տուող կանանց նաեւ արատահոս կ'ըլլայ։

Անբաւական ջուրը ծարաւը չանցներ և մարմնոյ ըրած կորուստը չկրնար փոխարինել. հետեւապէս արեան և արտահոսմանց պարունակած ջուրը կը թանձրանայ և այնպիսի անտանելի ծարաւ մը յառաջ կուգայ, որ ամենասոսկալի և քստմնելի չարահնար տանջանք իսկ առ ոչինչ են առ նովա. երբ մարդս ամբողջովին և բացարձակապէս ջրէ զրկուի՝ այն ատեն մահն անխուսափելի է։

Բարեխառն ջուրը առողջարար արդիւնքներ և եթէ կ'արտադրէ. բայց ջուրը կրնայ ցուրտ և տաք իսկ լիներ, և յայնժամ տարբեր աղդեցութիւններ կ'ընէ։

Եթէ սովորական վիճակի մէջ, մարմինը չքրտնած միջոցին զրոյ աստիճանին կամ անկից վար պաղ ջուր խմեմք, իսկոյն ստամոքսը ճնշուելով իր տաքութենէն մաս մը կը նուազի, նուազում՝ որոյ կը մասնակցի ամբողջ մարմինը. բայց տաքութիւնը շուտով կը վերադառնայ և ստամոքսը սաստիկ կը գրգռի. բաց ատի պաղ ջուրը նախ կ'ազդէ իբրև ամոքիչ ստամոքսի ջիղերուն, և ապա իբրը թեթև զօրացուցիչ. սոյն յատկութեանց պատճառաւ՝ սառոյցով ջուրը շատ մը ստամոքսացաւերու, դժուարամարսութեան և այլոց օգտակար է։

Բայց եթէ մարմինը քրտնած միջոցին խիստ պաղ կամ սառոյցով խառն ջուր խմուի, յայնժամ հետեւանքն ստէպ ծանր կ'ըլլայ։ Թէպէտև երբեմն բացառութիւն լինելով առժամանակեայ պաղին կը յաջորդէ բաւական սաստիկ անդրադարձութիւն մը, որով խմողն աղէկութիւն կ'զգայ յանձին, սակայն շատ անգամ այսպէս չըլլար, և երբեմն ալ ո՛չ միայն ստամոքսը՝ այլ և ամբողջ մարմինը կը մսի. բացատրեմք. երբ պաղ ջուր խըմուած ատեն մարմինը տաքցած ու քրտնած լինի, այս ջուրը մաս մը տաքութիւն կը պակսեցնէ ստամոքսէն, որ չէր մասնակցեր մորթոյ տաքութեան, այսինքն սովորական վիճակի մէջ կը դտնուէր. արդ, հաւասարակշռութիւնը կը վերահաստատի դրեթէ վայրկենական կերպիւ ստամոքս և շրջակայ աղիք իրենց կորուստը կը փոխարինեն մորթէն, որով մորթոյ տաքութիւնը կը նուազի և անոր արտահոսումը՝ որ չափազանց սաստկացեր էր՝ կը դադրի. բայց շատ անգամ դործը ասով չմնար և արիւնը դէպ ի ներքին դործարանս դիմելով միշտ հաւասարակշռութիւնը կ'արդիլէ. հետեւաբար ներքին բորբոքումնք յերեւան կուդան ըստ կազմածոյ և խառնուածոյ ենթակային։

Պ. կէրար իր կարեւոր յիշատակդրին մէջ բացատրած է մարմինը քրտնած միջոցին պաղ ջուր խմելէ յառաջ եկած ախտերը, որք կը տեսնուին ջղային դրութեան, մարսողութեան և շնչառութեան դործարանաց կողմէն։

Ջղային դրութեան կողմէ տեսնուածներն են հետեւեալք, մասնակի ցաւեր, Ռըէոմա-, թալկացում, յանկարծամահ։ Սոյն վերջնոյն վրայ ի մասնաւորի մեր դաւառացի բեռնակրաց ուշադրութիւնը կ'արդիլէ. հետեւաբար ներքին բորբոքումնք յերեւան կուդան ըստ կազմածոյ և խառնուածոյ ենթակային։

Պ. կէրար իր կարեւոր յիշատակդրին մէջ բացատրած է մարմինը քրտնած միջոցին պաղ ջուր խմելէ յառաջ եկած ախտերը, որք կը տեսնուին ջղային դրութեան, մարսողութեան և շնչառութեան դործարանաց կողմէն։

Ջղային դրութեան կողմէ տեսնուածներն են հետեւեալք, մասնակի ցաւեր, Ռըէոմա-, թալկացում, յանկարծամահ։ Սոյն վերջնոյն վրայ ի մասնաւորի մեր դաւառացի բեռնակրաց ուշադրութիւնը կը հրաւիրենք, վասն զի անոնց մէջ այսպիսի յանկարծական մահեր տեսնուած են քրտնած և ծանր բեռին տակ հեծած ատեն խիստ պաղ կամ սառոյցով խառն ջուր խմելով։ Մարսողութեան դործարանին կողմէն տեսնուածներն են փսխում, թանչք, դօլերա և մինչև անդամ բէրիբէրի են։

Շնչառութեան կողմանէ ալ հետագայ հիւանդութիւնք կը տեսնուին. արիւն փսխել, կողցաւ և շնչառութեան խողովակաց բորբոքումնք։

Ըստ կարծեաց Պ. կէրարի՝ վերոյիշեալ դիպաց ծանրութիւնը հետեւեալ չորս պայմաններէն կախումն ունի. 1. ջերմութիւն մարմնոյ. 2. դատարկութիւն ստամոքսի. 3. չափազանց ըմպելիք. 4. պաղութիւն ըմպելեաց։

Այսպիսի պարագայներու մէջ հետեւելիք առողջաբանական կանոններն են.

1. Պաղ ջրոյ հետ որ և իցէ ուրիշ բան մը խառնել, կամ դէթ շաքար և քիչ մը դինի։

2. Քիչ քիչ խմել և բերնին մէջ կարելի եղածին չափ չատ պահել։

3. Պաղ ըմպելեաց վրայ հաստատուն ուտելիք մ'առնուլ, թող քիչ քանակութեամբ ըլլայ. զոր օրինակ հաց, պաքսիմաթ ևն։

4. Պարահանդէսներու և երեկոյթներու մէջ երբ տաքութիւն զգացուի, աւելի ադեկ է թեթև չայ, փունչ կամ ո և է տաք ըմպելիք մը խմել։

5. Եթէ սառոյցով հեղուկներ գործածել ուզուի, ըսմով օշարակները նուազ անպատեհութիւններ ունին քան կաթով նա մանաւանդ պտուղներով շինուած պաղպաղակները։

Ղ. Ց. ՊԱԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

—o—

ԳԹՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԾՈՑ ԴԱՀՈՑԻՑՆ ԱՌՋԵՒ

Ո՞ՂԵՐՅԻ՞Ն

Ցեղապետն Վարդոհի Տէր Նոյ Եպիսկոպոսեան

—

Օր մը երկնից կամարաց մէջ կը լսուէր,
«Հայր, Դուստրը քո՝ Գութն է գահիդ առ ընթէր.
Այլ զի՞նչ յեղմունք են այս . . . .
. . . . . .
«Ինչո՞ւ պայծառ եւ ծիծաղկոտ աչերէն,
Որ գերարփիք են մեր յարկաց լուսեղէն,
Թուխ ամպերու անցաւ մէկ կոյտ սըրավար,
Ցոցն ուռուցիկ. — անշուշտ չանթիւք հրբավառ —
Ո՞ւր են տաւիղ եւ ոսկեթել քընարներ,
Մըշտամըրմունջ դաս զըւարթնոց հրաստեռ,
Ահա վարէն տըն կած խաւար ըզգըլուխ՝
Լուռ կը դիտէ, թեւերն այսրէն ձրդել թուխ։»
—Տես, Գաբրիէլ, այդ Տանն իշխող տընօրէն՝
Որ պատկերիս զիւրեւ ըզփառքն ալ կըրէն,
Ըզսահմանօքն ինչո՞ւ կ'անցնի անդր ի բաց.
Տես յաւազուտն ի՞նչպէս ծըռին ջուրք ալեաց։
«Սատաններու պէս երկրի ծոց կը մրտնէ,
Զաղիս անգութին իւր մոր ճանկով կը քերէ.
Ի վայլ ոսկւոյն եւ երկաթին իսկ ի խոյզ՝
Դեռ մինչեւ ո՞ւր պիտի մրտնէ խորասոյզ։
Հոս ալ չարուած են ի ճակատ այդ մարդիկ,
Կը մրրմրան ցասմամբ կուրծքերն ուռուցիկ.
Կատաղութիւն կը վառէ զսիրտ ամենուն,
Բոցով կ'եռան. ահա գետինն է յարիւն։
«Տե՛ս. հոս ծաղկունք՝ երկրի սատղեր նըկարէն —
Փոսոր ալեաց մէջ կը լիւղեն ընդ ամեն.
Արշալուսոյ ցողիկն ինչո՞ւ մարգըրտեալ,
Գաս արմատաց վրան ի զուր կը շղղայ։
«Ահա տաճարքս ինկած գետնի հաւասար,
Որոյ գազանաց են եւ զեռնոց ի դադար.
Եւ թեւ խաչին՝ ըզքեալ սըրտից ապաստան՝
Երկաթաղէն ոտից դրուած է կոխան։
«Շա՛տ է. յօնքերըս պըռըստեմ միանդամ
Ըսի. եւ նետ մը չանթերէս թողուլ տամ։
Զարնեմ թեթեւ հիմէն զերկիր եւ ընդ փոյթ
Ոչընչութեան դեմ անակուշտն ի յանդունդ։»
Որոտ եւ չանթ, հուր եւ մրրիկ սեւաթոյր
Ահաբեկեալ հոն կը դիմեն ունկն ի լուր.
Թող կորնչի երկիր, բարբառ կը լսուի,
Եւ դեռ ինչո՞ւ կը տատանի այդ փոշի։
Ա՛յլ այս պահուն յանկարծ խաչին անդ պատկեր
Կը պարզըւի, Որդին արեամբ ներաշխեր.
Իւր չիշանուտ բիբերն ուղղեալ աշխարհի,
«Արիւնս կայ, Հա՛յր, ցող տաղաս իմ աղի։»
«Արիւն եղբօրս, Հայր, Գութն անդ կը կրկնէ։»
Աչքն արցունքոտ դահոյից ջրով կը ծընկէ.
«Կ'երթամ փրկանք, սիրտս ու հոգիս քեզ նըվէր
Հոն սեղանին վրայ դնեմ ի ճենճեր։
«Կանաչներով ոսպառժներ կը պըճնեմ,
Ի փունջ ծաղկանց դաշտեր ոտիցս իմ ի ճեմ.
Տուն կը չինեմ աղքատ այրւոյն սըրտաւեր,
Եւ որբ տղուն կ'ըլլամ մայրիկ անձնընվէր։
«Օրօր կ'ըսեմ՝ մրրմնջելով քաղցրալուր.
Կուրծս անխընայ կուտամ նըմա կերակուր.
Իւր աընարից վերեւ անքուն կը տընիմ,
Հոն ողջունէ թող նորադարձ զիս արփին։
«Շիջեալ կանթեղ աւերակաց սըրտերու.
Ցոյս՝ տաճարաց ներքին աստղիկ լուսատու,
Շընչովս ի լոյս նորանըշոյլ կը վառեմ,
Եւ խաւարին կ'ըսեմ զընա՝ տարադէմ։
«Իսկ որ տեսնեմ Զայրոյթ մոլեալ ի գըրդիռ,
Սեւ փոթորկաց յուզել մրրիկ ջանադիր,
Աչք արտասուս հոն կը դիմեմ ըշտապաւ
Եւ կը պարզեմ Արեւ՝ արքսուր զայն երկնաւ։
«Վա՜յ. քաջազօր բազկէն ահա կորզեալ սուր՝
Ոաքերուս տակ պիտի փըշրեմ առաթուր.
Թող արցունքներ, կ'ըսեմ. խառնին ալ իրար,
Դուք եղբայր էք. եւ սիրուեցէք հաւասար։
«Սըրտերու մէջ բացուած վէրքերն ադրիւնոտ
Մաղով գլխուս, սրբտիս սիրովը զրթոտ
Փաթթեմ այս, եւ մուրացկին աջ դողդոջ
Կը դարձնեմ երբէք ունայն յինքն ոչ։
«Կը մօտենամ յուշիկ զառամ ծերունւոյն.
Որ զանգընդովք կը տատանի շուրջ Մահուն.
Կ'ուղղեմ աչերն իւր նըւազկոտ վերին լոյս,
Մատամբըս ցոյց կուտամ զերկնաւավառեալ Ցոյս։»
Լոյս մ'անպատում երկնից ոլորտը ցոլաց.
Զանք հնչեցին մշտամըրմունջ նըւագաց.
Ա յասեռեաւ երկիր բաժին գրթութեան.
Գրթութիւն Մայր երկրի, եւ զոհ փրկական։

Մ. ԿԻՒՐՃԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԱԿ

Հարցանկաթերթից Մեղրուրեան Լրագրանի

Յունիս 20—27

—

Ժամ Յունիս 20 ՇԱԲԱԹ

9—10 Արտասանութիւն Հայ. Ֆըրանս. Գ. Տարւոյ.
10—11 Ընթերցանութիւն Գ. Բ. և Ա. Տարւոյ.
11—12 Արտասանութիւն Ուսում. Նարանի Ա. Տարւոյ.
2—3 Տրամաբանութիւն Դ. Տարւոյ.
3—4 Ֆրանս. Ընթերցանութիւն Ա. Բ. և Գ. Տարւոյ.
4—5 Քրիստոնէական Նախակրթ. և Ուսումն. Ա. Տարւոյ.

Յունիս 21 ԿԻՐԱԿԻ

9—10 Շարադրութիւն Բ. Տարւոյ.
10—11 Շարադրութիւն Ա. Տարւոյ.
11—12 Պատմութիւն Բ. Տարւոյ.
2— 3 Պատմութիւն Գ. Տարւոյ.
3— 4 Գրագիտութիւն Դ. Տարւոյ.
4— 5 Արտասանութիւն Նախակրթ. և Մարմնամարզ.

Յունիս 22 ԵՐԵՔՇԱԲԹԻ

9—10 Թուաբանութիւն Նախակրթ. Գ. Բ. Տարւոյ.
10—11 Իրագիտ. Նախ. Գ. Տարւոյ.
11—12 Աշխարհագր. Գ. Տարւոյ.
2— 3 Հանրահաշիւ Դ. Տարւոյ.
3— 4 Թուագիտ. Գ. Տարւոյ.
4— 5 Արտասանութիւն Բ. Տարւոյ.

Յունիս 23 ՇԱԲԱԹ

9—10 Ֆրանսերէն Բ. Տարւոյ.
10—11 Պատմութիւն Դ. Տարւոյ.
11—12 Ֆրանս. Ուսում. Գ. Տարւոյ.
2— 3 Ֆրանսերէն Դ. Տարւոյ.
3— 4 Երաժշտութիւն Ընդհանուր.
4— 5 Պատմ. Պատեն. Դ. Տարւոյ.

Յունիս 25 ԵՐԵՔՇԱԲԹԻ

9—10 Առանին Տնտես. Դ. Տարւոյ.
10—11 Մարդակդմ. Ուս. Բ. Տարւոյ.
11—12 Ֆրանսերէն Ա. Տարւոյ.
2— 3 Կրօնագիտ. Ա. Տարւոյ.
3— 4 Բարոյագիտ. Դ. Տարւոյ.
4— 5 Գրագիտութիւն Գ. Տարւոյ.

Յունիս 26 ԵՐԵՔՇԱԲԹԻ

9—10 Թուագիտութիւն Ա. Տարւոյ.
10—11 Առողջաբանութ. Գ. Տարւոյ.
11—12 Ձեւագիտութիւն Ա. և Բ. Տարւոյ.
2—3 Հայերէն Գ. Տարւոյ.
3—4 Բնագիտութիւն Դ. Տարւոյ.
4—5 Ձեւագիտութիւն Գ. և Դ. Տարւոյ.

Յունիս 27 ԵՐԵՔՇԱԲԹԻ

9—10 Աշխարհագր. Նախակրթ. և Ուսում. Ա. Տարւոյ.
10—11 Հայերէն Ուսում. Ա. Տարւոյ.
11—12 Թուաբ. Ուսում. Բ. Տարւոյ.
2— 3 Գծագիտ. Բ. և Գ. Տարւոյ.
3— 4 Հայերէն Գ. Տարւոյ.
4— 5 Ձեռագործ Ընդհանուր։

Յանոթ. — Ժամերն ըստ Եւրոպացւոց են։ Գծագրութիւնք Դեղագիրք և Ասեղնագործք միշտ ի զնին։ Աւուրք դաշնակի են Բշ. Եշ. Շբ.

ԱԶԴ

Ազգանուէր Հայրենեաց ընկերութիւն

Եօզկատու Ազգային աղջկանց վարժարանին համար՝ Մայրենի լեզուի, Աշխարհագրութեան, Թուաբանութեան, Ազգ. Պատմութեան, Դաշնակի կամ Գծագրութեան, ինչպէս նաեւ ձեռագործի և կար ու ձեւի հմուտ ամուսնացեալ վարժուհի մը կը խնդրուի, որոյ ամուսինն եւս դասատուի պաշտօն վարելով պիտի ստանան առ առաւելն 10 ոսկի ամսական։

Փափաքողք պէտք է դիմեն Ազգ. Հայրենեաց ընկերութեան կեդրոնական գործադիր ժողովոյ ատենապետին։

ՏՈՒԹՈՒՐ ՃԵԼԱԼԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ իւր յաճախորդաց ամեն կերպով դիւրութիւն ընծայելու համար այս անգամ իւր հիւանդ ընդունելու տեղը փոխադրած է Ղալաթիա, Քօմիսիոն խանի դրան դիմացը, Խավեար խանի դրան կից թիւ 13 տունը, ուր ամեն օր պիտի գտնուի, ՀԷՎԷ օրերն ալ առաւօտէն մինչեւ երեկոյ, Գաղղիական, միղանցքաորոքման եւ ամեն կարգի ծննդական գործարանաց վերաբերեալ ախտեր դարմանելու՝ որք են իւր մասնագիտութիւնն։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

—o—

ՈՒՂԵՑՈՑՑ

Մատոյր և Փոքրիկ Աշխարհաբար Բիբլիա

Յօրինեց Գրիգոր Վարդանեան

Նախկին աշակերտ Հայկ. Կրթարանի

Սոյն գրկոյկս՝ որ իւր տեսակին մէջ առաջինն է, հակառակ իւր համառօտութեան՝ կը պարունակէ Աշխարհաբարի հարկաւոր եւ էական պայմաններն։ Աւելորդ է ճառել թէ որքան պիտանի է սա ամէն անոնց՝ որք կը զործածեն լեզու մը, զուրկ ընտրութենէ եւ միօրինակութենէ։

Կեդրոնատեղին է Արմենան Տպարանն. նաեւ կը գտնուի ամէն Հայ դրավաճառաց քով եւ Պանճէ-դարու Ջրավաճառ Պողոսի եւ Ցակոբի խանուքը։ Գին 2 դրուշ։

10էն աւելի գնողաց համար մասնաւոր զեղչ մը կը լինի։

ԴՐՈՒՇԻ ՄԱԼՈՑ

ԸՆՏԱՆԵԶՈՒՐԿ

ՎԷՊ ՍՐՏԱԳՐԱՒ ԵՒ ՀՐԱՀԱՆԳԻՋ ՊՍԱԿԵԱԼ Ի ՁԵՄԱՐԱՆԷ ՏՐԱՆՍԱՑԻ

Թուրքմանոնիէն Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆԻ

ՀԱՏՈՐ Ա.

Կը գտնուի Մասիսի գրասենեակն եւ ամեն հայ գրավաճառաց քով. եւս եւ Գահճէ գաղու Ջրավաճառ Պողոս եւ Ցակոբ ալանեանուն խանութներ. գին 7 1/2 ղրուշ։

Նոյն տեղերը կը վաճառուին նաեւ.

Սկզ. Բանի Բազմաւեան Տնտեսագ.	ղրշ
Ռիեան	6
Կոչիր Մ. Դրոց Սրբոյն, 2 հատ.	12
Ամանորեան Փարիզէ	6
Մարիկոնի	7 1/2
Ցերէրէ է Լոան	7 1/2

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՏՈՒԱՍՏԱՆ

Հեղինակ

ՏՈՒԹ. Տ. Ս. ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ

Բազմահմուտ Տոքթորը մարդկային պատուաստման և ծաղկի հիւանդութեան վրայ կը խօսի իւր այս երկասիրութեան մէջ, որ մաքուր թղթի վրայ տպագրուած և բազմաթիւ լուսանկար և փորագրեալ պատկերներով զարդարուած է։ Այս գեղեցիկ մատեանն, որոյ գինը 35 ղրուշ է, կը վաճառուի Պոլիս, Գալաթիոյ գրատունը, Ղալաթիա, Ցակոբ Արշակ էֆէնտիի թղթավաճառանոցն, և Բերա, Լոբէնց և Քէյլ գրատունը։

Վենետիկ Մխիթարեան Տպարան

ԱՆՆԱ Լ՝ ՍԷՐ ԾՆՈՂԱԿԱՆ

Վէպասանութիւն դէ Մուլէ Գաղէյոյ

Բալոյական վէպ մ'ամէն հասակի յարմար, մանաւանդ տղայոց՝ որոց աղուոր դաս մ'է ծնողասիրութեան։ Ընտիր աշխարհաբար լեզուով մրցանակի գեղեցիկ գրքոյկ մ'է։

Կը վաճառուի Ղալաթիա Սեղբոս խան Մխիթարեանց գրասենեակը ընդ այլ մրցանակի յարմար ծաղկեայ եւ պարզ կազմով գրեանց։

Կը գտնուի նաեւ ամեն հայ գրավաճառաց քով ի գին 1.75 ֆրանքի։

ԿՈՒՆԵԷԹ–ԻԻԼ–ԼՈՒՂԱԹ

Բ. Ա Ռ Ի Ա Ր Ա Ն

ՖՈՒԱՆՍԵՐԷՆԷ Ի ԹՈՒՐՔԵՐԷՆ

Աշխատասիրողք

ՄԷՀԷՄԷԴ ՇԷՐԷՖ Լ՝ ՄԷՀՄԷԼԱՇԷԱՆ

Պաշտօնեայք Հասարակաց կրթութեան Գրաքննութեան սենեկի

Հրատարակիչ Գաբրիէլ Պաղտասարեան

Այս բառարանն, պարունակած արուեստական եւ գիտական բառերու ճոխութեամբն, բացատրութեանց յստակութեամբն իւր տեսակին մէջ առաջինը կը համարուի։ Սոյն գործը ցարդ հրատարակուած Ֆրանսերէն–Թուրքերէն բառարոց վրայ սա առաւելութիւնն ալ ունի որ թուրք տառերով տրուած բացատրութիւններն լատին տառերով եւս նշանակուած են անոր մէջ, մասնաւորապէս ի դիւրութիւն օտարազգեաց։

Մասնաւոր խնամքով, գեղեցիկ եւ մաքուր տպագրութեամբ տեսր առ տեսր ի լոյս կ'ընծայուի Արամեան տպարանէն։

Առաջին հատորն՝ որ երեսուն երկու երեսներով երեսուն եւ մէկ տեսակներէ բաղկացեալ է՝ տեսր առ տեսր հրատարակուելէ յետոյ կազմուած կը վաճառուի ի գին 60 դահ. արծաթ։

Բ. հատորին 13 բորդ տեսրն եւս հրատարակուած են եւ կը վաճառուին ի գին 2 դահ. արծ. իւրաքանչիւրն։

Բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար 75 դահ. ոսկեդրամ. դաւառաց համար 100։

Բ. հատորին 15րդ տեսրին հրատարակումէն ետքը բաժանորդագրութիւն չընդունուիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մէջտեղ Ընկերութեանց Հայոց

Ն. ՏԷՐ–ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՑՐԵՆԻ ԼԵԶՈՒ, Ա. ՏԱՐԻ

Աղբիւրներուն և սկզբնական ընթերցողաց փորձառական մանուածներու համար

Եօթներորդ տպագրութիւն

Կը գտնուի ամեն գրավաճառաց քով. Կեդրոնատեղին է Հայոց Միացեալ ընկերութեանց գրասենեակն, Կալաթա, Կէօչէ Օղլու խան, թիւ 12։

Գին եւ զեղչ անփոփոխ

Ծանօթ. — Հայոց Միացեալ ընկերութեանց կնիքը չկրող օրինակներն անվաւեր են։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

«Փարիզեան Գեղագրութիւն»ը ժամանակէ մ'ի վեր սպառած լինելով՝ այս անգամ նորա զգալի պակասը լցնելու եւ աղգային վարժարանաց ուսանող մանկուն լաստ ամենայնի օգտակար լինելու առաջադրութեամբ, հրատարակուած է «Հայկական Գեղագրութիւն»ն՝ յորում կ'ամփոփուին գործածական եւ զարդարուն ամեն տեսակ գրեր՝ վայելչագեղ յարմարութեամբ, նաեւ Ֆրանսերէն զանազան գրեր՝ իրբեւ կարեւոր յաւելուած։

Հակառակ թղթին ազնուութեան եւ վիմագրութեան գեղեցկութեան տարուած խնամոց՝ խիստ ժան գնով կը վաճառուի 5 ղրշի։

Կը գտնուի մասնաւորապէս Արամեան եւ Գալաֆեան գրատուններն։

ԴԵՂԱՐԱՆ ԷՐՃԻԵԱՍ

ԵՒ ԶԿԱՆ ԻՒՂԻ ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ

Եէնի Ճամի Բօսթանճանէին դիմացը 12 թուով Դեղարանն այս անգամ Դեղարան Էրճիեաս անուանով կը շարունակուի. ու մօտերս Նորվեկիացի ամենաընտիր ձկան իւղէն մեծ քանակութեամբ բերուած ըլլալով՝ օխտոյով ու տակառով կը ծախուի. նաեւ այլ եւ այլ ընտիր քսուեաքներ (ֆին շամբանեը) հատով եւ սնտուկով կը տրուի։

Ցիշեալ Դեղարանն ամեն օր Տօք. կատարեան առտուները եւ Տօք. Այտաղեան էֆէնտին կէսօրէն մինչեւ իրիկուն կը գտնուին։ 10

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

ԸՆԴ ԴԷԼ ԱՆԳԼԷՅ, Կ. Պոլսոյ Լ Օթէսայի ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՐ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Անլանտ	2,000	Լիէոնդրա	4,500
Անթիլը	3,000	Մարիէլ	4,300
Արէյ	1,500	Մարգարին	2,500
Գասանա	3,500	Մէլը	2,000
Գէորգին	2,200	Ներբ	2,000
Գրաֆ	2,000	Օրիէլը	5,000
Գէյբ	2 600	Սրլանդ	3,000
Դուլիէնա	2,500	Սդրանդրա	4,500
Գամբա	2,100	Սդրա	2,000
Գարբ	2,000	Բանիթ	1,200
Գոմ	2,700	Բաբրմ	3,200
Տիրա	2,500	Բարդեր	1,700
Տօմին	1,800	Բէրբ	2,800
Տրաբ	2,600	Իլուդրա	4,400
Էրարբ	2,600	Ռինարա	3,200
Ֆուլտն	800	Ռօնլը	3,000
Ֆէրա	1,700	Ռանա	5,500
Ֆլամինկ	1,600	Ռանա	3,500
Կուլիէտ	5,500	Սուբրա	4,000
Կիբրան	2,200	Սաֆիթ	2,000
Կոզ	1,800	Սէլէլ	2,000
Կրանա	2,200	Սարենդ	4,300
Հանդ		Թասոս	1,200
Հերբ	2,000	Թ. Ռիլբի	3,000
Հիրուլ	3,000	Թէլիէր	1,300
Հիմարդրդ	1,200	Թանգրա	2,800
Ճիրա	2,300	Փանդրա	3,600
Քիլբ	2,000	Սեբրա	3,600
Քանա	2,200	Զէրբ	1,000
Լէս	2,000	Զէրբ	140

Բուլբմ չոգենաւն, Լիվրբուլէն ասա հասաւ ընդհանուր վաճառքով եւ ի մօտոյ Օտէսա պիտի ուղեւորի։

Քանա չոգենաւը Անգլիոյ մէջ բեռ կ'առնու Կ. Պոլսոյ եւ Օտէսայի համար։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ'ընծայուի։

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ՖՐԷՏԷՐԻՔ ՀԻԼՏ Գործակալ

թիւ 17–18, Քիւչիւք Միւսէթ խան Ղալաթիա։

ԲԱԲԱՅԱՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվերբուլ, Մէլբուրնի Լ Օթէսայի դէջ-կանոնաւորապէս բանող

ՇՈԳԵՆԱՒԻՔ

Անուանք	Թոնոյ	Նաւապետք
Այա Սոֆիա	3,000	Գրքս
Աբարար	2,500	Ռոճերս
Աբդուլլա	2,500	Քրուիքշանք
Լաֆնիա	2,500	Ուիլքս
Մասկոտնա	3,500	Մարշ
Բոսֆէլիա	2,300	Ֆօթբրիվ

Այա Սոֆիա չոգենաւն յուլիս 7ին Օտէսայէն ասա կ'սպասուի։

Այս չոգենաւը կին գամբուսներ ալ ունին։

Ընկերութիւնն օրինաւոր գներով վաճառք կ'ընդունի Եւրոպական երկիրներու եւ Ամերիկայի համար։

Ամեն դիւրութիւն եւ հանգստութիւն կը տրուին ուղեւորաց։

Դիմել առ ԴԱՆԻԷԼ, ԲԱԲԱՅԻ ԵՒ ԸՆԿ. Գործակալ

ՓԻՆԱՐՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Ուր ամբոյ տեղի մ'անգամ կը բանին Լիվերբուլ Լ Մէլբուրնի գծին։

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Օրանիա	7,000	Մալա	3,000
Ադրա	3,000	Մարսէյ	2,500
Ալիքէյ	3,000	Նանթ	2,500
Գոդրիա	4,600	Բալանդ	5,000
Գոթվիա	3,800	Բարբիա	3,200
Գալեթ	2,500	Բալթիա	3,000
Գրիֆիթ Գոյն	1,200	Սիրիա	7,800
Սիգնալիա	5,000	Սիրիա	4,600
Գրանալիա	4,700	Սարմատա	3,000
Շերդարէ	2,000	Սամարիա	3,000
Տեվերա	2,500	Սիրան	3,000
Կալիա	4,000	Թրիգա	3,000
Քիրար	2,500	Թրիմիրար	2,500
Մարթան	3,000		

Քիրար չոգենաւը, նաւ. Ճանէս, Լիվերբուլէն ասա հասաւ ընդհանուր վաճառքով։

Սաորագրեալս արտօնութիւն ունի ճանապարհ եւ վաճառք ընդունիլ Նիւ Եորք եւ Պոսդընի, ինչպէս նաեւ Միացեալ–Նահանգաց ուրիշ կողմերուն համար՝ օրինաւոր տակառներով։

Դիմել առ

ԹՈՄԱՍ Զ. ՃՈԼԻ, Գործակատար. թիւ 1 Քիւչիւք Հալիլ փաշա խան Ղալաթիա.

VICHY

ՎԻՇԻ

Վիշի–Բիւրն, փողոց 22 Պուլվար, Մոնմարթր.

PASTILLES DIGESTIVES. — Վիշիի աղբիւրներէն հանուած աղերէն շինուած։ Այս բասմիյլներն ախորժահամ են և ստամոքսի թթուութեանց և դժուարամարսութեանց դէմ շատ ազդու։

SEL DE VICHY POUR BAINS. — Բաղնիքի համար ծրար մը աղ բաւական է այն անձանց համար որք Վիշի չեն, կարող երթալ։

Կեղծերէն զգուշանալու համար պէտք է ԲԱՆՆՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ դրոշմը բոլոր արտադրութեանց վրայ փնտռել։

Պոլսոյ ամեն դեղագործաց և դեղավաճառաց քով կը գտնուի։

Ն. ԲԱՔԷ ԷՆԷ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մարսիլիայէն Լ Ռիզիէ դէջ-կանոնաւորապէս բանող

Մեկնում Մարսիլիայէն ամեն տասն եւ հինգ օրն անգամ մը չորեքշաբթի օրերը։

Ուղղիչ Լ արտ ուվ-օրուրիան



Ս. Մ. Մինասեան և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ կը ծախուին Ամերիկայի երկրագործական գործիքներ։ Զանազան տեսակ արօրներ։ Մարացորեն վար տուող գործիք, մեծ և փոքր։ Ցորեն մաղելու գործիք մեծ և փոքր։ Քէնէթ ու խոտ չարդող գործիք։ Զանազան գործիքներ բանեցնելու համար ձիով դարձող մեքենայ։ Պարտէզի գործիքներ։ Հրդեհի փողր ջրհան և այլ զանազան Ամերիկայի ջրհաններ։ Այլ և այլ պտղոց ջուրերը հանելու գործիք։ Ջիերու և արջառաց կերը մանրելու աղօրիք։ Կայն կայն։

Ամերիկեան վաճառատուն ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ։

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTBH RITISH AND MERCANTILE Insurance company

ՆՈՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԵՒ ՄԷՐՔԸՆԹԱՅԼ

Լոնդրայի Լ Էդինպուրկի ապահովութեան ընկերութիւն

	Անդէր Լիր.
Արտօնեալ դրամագլուխ	3,000,000
Բաժանորդագրեալ »	2,500,000
Վճարեալ դրամագլուխ	625,000
Պահեստի դրամ հրդեհի պատահակա. նութեանց դէմ	1,592,235
Կեանքի պատահակա. նութեանց դէմ պա. հեստի դրամ	3,841,194
	6,058,429
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	1,186,865
Կենաց ճիւղէն հասոյթ 1883 տարւոյն	551,307
	1,738,172

NORTHERN Assurance company

ՆՕՐԹՀԵՐՆ

Լոնդրայի Լ Էդինպուրկի ապահովութեան ընկերութիւն

	Անդէր Լիր.
Բաժանորդագրեալ դրամագլուխ	3,000,000
Վճարեալ դրամագլուխ	300 000
Պահեստի դրամ հրդեհի պատահակա. նութեանց դէմ	778,889
Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ	1,670,519
	2,749,408
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1882 տարւոյ	460,126
Կեանքի ճիւղէն հասոյթ 1882 տարւոյ	245,161
	705,287

Սաորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծանուցանէ թէ ինքն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուի, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանէ։

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովն՝ Ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բրնողներու ինքզինք ներկայացնել։

Գրեթէ ամեն կարգի վաճառաւոր ապահովութիւնք կրնան ընդունուիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն եւ ջաւառները։

MARITIME

Insurance Cie limited of Liverpool

Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ

Ծովային ապահովութեան ընկերութիւն

Դրամագլուխ 500,000 Անգլ. լիրա

Սաորագրեալը, չոգենաւերու և առագաստանաւերու մէջի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ։

Գիներուն եւ այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուզողք պէտք է դիմեն Ղալաթիա Քօմխիսն խանի անկիւնը՝ երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակն, առ

Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակատար յիշեալ Ընկերութեանց

ԳԱՌՆԻԿ Ե ՍԵՐՈԲԵԱՆ

Նաւաղչէքի, ուղեւորութեան եւ այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն ԹԻՆԻՈՔԼ ԲԸՊՈՒԼ Մոմհանէ փողոց, թիւ 141

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվերբուլ Լ՝ Մէլբուրնի դէջ-բանող ընթնաւոր

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Քանոբոս	4,200	Ուլբրա	3,000
Ֆարս	4,000	Նեբրիա	3,000
Օսմանլի	4,000	Բերա	3,000
Սեսոստրիս	3,250	Աբերտրէ	1,700
Թեպե	3,250	Լորնա	800
Մալաբար	3,250	Օլիֆա	800
Մարիոնիա	3,250	Սեսիլ	700

Ֆարս չոգ. նաւ. Քուբբի, Բոթիլն ասա կ'սպասուի յուլիս 5ին Լիվերբուլ երթալու համար։

Բերա չոգ. նաւ. Ֆորբսթը, յուլիս 14ին Լիվերբուլէն ասա կ'սպասուի ընդհանուր վաճառքով։

Վերոյիշեալ չոգենաւք չքեղապէս արդարուած են ճանապարհներու համար.

Դիմել առ Ժ. Թ. ՈՒԻԹՕԼ եւ ԸՆԿ. Գործակատար Մէյտանլըզ փողոց, Գալաթա Տնօրէնութիւն, Լիվերբուլ,

ՃԷՅՄՍ ՄՈՍ եւ ԸՆԿ. 31, Ճէյմս Սթրիդ, Լիվերբուլ

Գործակալներն՝

Ալեքսանդրիա	Ռ. Ճ. Մոս եւ Ընկ.
Ալժէ	Է. տը Լաքրուա
Պէրութ	Լէվի, Ֆրանք եւ Ընկ.
Կ. Պոլիս	Ճ. Վ. Ուիթոլ եւ Ընկ.
Դարդանէլ	Է. Կրէյ
Ճիպրալթար	Սմիթ, Իմսի եւ Ընկ.
Մալթա	Սմիթ եւ Ընկ.
Զմիւռնիա	Գ. Ուիթոլ եւ Ընկ.
Շիրա	Ն. Գ. Բէդրոսլոյ

ՌՈՒԻՆ

Անգլիական ընկերութիւն Ապահովութեան հրդեհի դէմ

Գիներու եւ այլ տեղեկութեանց համար պէտք է դիմել առ

Ժ. Թ. ՈՒԻԹՕԼ եւ ԸՆԿ. Կ. Պոլիս, Մէյտանլըզ փողոց կամ Ղալաթիա, Ատա խան թիւ 9։

ԴՐԱՄԱԳԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա 20 յունիս

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ

(Օսմ. ոսկին 100 ղրուշի հաշուով)

Լոնդրա 3 ամիս, ղրշ.	110,05 առ Անգլ. լիր
Փարիզ 3 » Ֆր.	22,92 1/2 առ Օսմ. լիր

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմ. Քոնս. գոցուեցաւ	8,31
բացուեցաւ	8,25
կէս օրին	8,28 1/2
Եգիպտ. միացեալ. ոսկի	64,32 1/2
Բումելիի երկաթուղի	42,[illegible]
	Անգլ. լիր
Սօսիէթէ ժէնէրալ	3,22
» Օթօման	3,25
Կ. Պոլսոյ Պանքան	5,15
Քրէտիի ժէնէրալ 6% Օսմ. լիր	7,15
Փոխ. 1863 (Մուլ–) 6% Ֆր.	54,
» 1865 » 6%	49,
» 1869 (Բինար) 6%	44,50
» 1872 (Պոն տիւ Թրէզոր)	16,50
» 1873 (Բինար) 6%	39,
Լաուրիում	81
Թրամուայ Օսմ. լիր	290
Թղթադրամ	3000
Հէվալէսիդ	7 1/2
Բէքոր	

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնդրա 1 յուլիս

Անգլ. Քոնս.	99 11/16
Օսմ. »	7 3/4
Փոխ. 1865	10 1/4
» 1869	9 1/8
» 1871	66 3/4
» 1872	15
» 1873	8
» 1877	78 3/4
Պանք Օթօման	14 1/8
Ռուս. փոխ. 75ի	89 3/4
Եգիպտ. միացեալ	58 5/8
» արտօնեալ	83
Տայրա Սանիէ	53 1/2
Փոխ. Ռօյիլա	83
Փոխանակագիր Փարիզի վրայ	25 336

		Փարիզ 1 յուլիս.	
Գաղղ. Քոնս.	3 0/0		78,30
» »	4 1/2 0/0		107·15
Օսմ. Քոնս.			7, 92 1/2
Փոխ. 1865		Ֆր.	50
» 1869			
» 1873			41,
Օսմ. Երկաթուղի			41,37 1/2
» Բէյրութի բաժնեթուղթք			536 25
Պանք Օթօման (գ. կ.)			627,50
Քրէտիի Լիոնէ (գ. կ.)			541 25
Ռուս. փոխ. 5 առ 0/0 (1877)			93 1/4
Իտալ. Քոնս.			95,40
Եգիպտ. միացեալ			296 25
Փոխանակագիր Լոնդրայի վրայ			25,18
		Վիէննա 1 յուլիս.	
Փոխ. Լոնդրայի վրայ			121,95
Բումելիի երկաթուղի			20,

ԿԷՍ ՕՐ 4,19